

### «ՀԱՅ ԴԱՏ» մատենաշար թիվ 1


# ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ

**ԻՆՔՆԱՊԱՏՎԱՆԱԿԱՆ ԿՐԻՎՆԵՐԸ**

ԱՐԵՎՄՆՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1915 ԹՎԱԿԱՆԻՆ ԵՎ

# ରେ ଫାଟେ ପାକିମା ମାନିଲେ

## ՊԱՐՍԿԱՍՏԱՆ



# «ՀԱՅ ԴԱՏ» մատենաշարը թիվ 1

ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ

Ի ՆՔՆԱՊԱԾՏՊԱՆԱԿԱՆ ԿՈՒՎՆԵՐԸ  
ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1915 ԹՎԱԿԱՆԻՆ  
ԵՎ  
ՀՅ ԴԱԾՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ԵՐԵՎԱՆ  
«Հայ Դատ» հիմնադրամ  
2010

ՀՏԴ 941 (479.25)  
ԳՄԴ 63.3 (23)  
Ս 150

## Սահակյան Ռ.

Ս 150 «Ինքնապաշտպանական կոիվները Վրեւմտյան Յայաստանում 1915 թվականին Եւ ՀՅ Դաշնակցությունը»: /Ռ. Սահակյան.-Եր.: «Յայ Դատ» հիմնադրամ, 2010.- 72 էջ:

Աշխատության մեջ ներկայացված են Առաջին աշխարհամարտի տարիներին հայ ժողովրդի դեմ Օսմանյան երիտթուրքական կառավարության կազմակերպած եւ իրականացրած ցեղասպանության եւ հայ քաղաքական կուսակցությունների, մասնավորապես, ՀՅԴ դեկավարությամբ Վրեւմտյան Յայատանի տարբեր քնակավայրերում մղած ինքնապաշտպանական կոիվների առանձին դրվագներ:

Գիրքը նախատեսված է լուսթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԴ 941 (479.25)  
ԳՄԴ 63.3 (23)

## Վանի նահանգի և քաղաքի ինքնապաշտպանական կոիվները

Առաջին համաշխարհային պատերազմը Թուրքիայի համար պատեհ առիթ հանդիսացավ հաշվիարդար տեսնելու Արևմտյան Հայաստանի և Փոքր Ասիայի հայության նկատմամբ: Օսմանյան Թուրքիայի երիտրուրքական կառավարությունը ծրագրում և իրականացնում է հայ քնակչության նկատմամբ ցեղասպանություն: Ակսած 1914 թ. սեպտեմբերից և հատկապես 1915 թ. փետրվարից, տեղի են ունենում հայ քնակչության զանգվածային տնտեսանություններ, կոստրածներ և ունեցվածքի թալան: Հայ քնակչությունը, որտեղ որ հնարավոր էր, կարողացավ կազմակերպել և դիմադրել երիտրուրք ջարդարարներին: Արևմտյան Հայաստանում և Փոքր Ասիայի հայաբնակ վայրերում հայության ինքնապաշտպանությունն առավել արդյունավետ կլիներ, եթե թուրքական իշխանությունների կողմից չճնրքակալվեին և չսպանվեին հայ հասարակական, քաղաքական և կրոնական գործիչները: Հատկապես ծանր հարված է կրում արևմտահայ իրականության մեջ մեծ հենդինակություն ունեցող ՀՅ Դաշնակցությունը: Այնուամենայնիվ, այնտեղ, որտեղ հայ ազգային կուսակցությունները, գլխավորապես Դաշնակցությունը, կարողացան պահպանել իրենց կառույցները, նշված վայրերում նրանք կարողացան կազմակերպել տեղի հայության ինքնապաշտպանությունը:

1915 թ. և հետագա ինքնապաշտպանական մարտերը երիտրուրքական իշխանությունների կողմից մեկնաբանվում են որպես Անտանտի տերությունների, մասնավորապես ռուսների կողմից ծրագրված «ապստամբություն»: Նրանց կարծիքով, հայերը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հանդիս եկան որպես թշնամի տերությունների՝ Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի հավատարիմ դաշնակիցներ և իրենց «ապստամբական» գործողություններով նպաստեցին այդ տերությունների հաղթանակին:

«Հակակառավարական» գործողություններում ամբաստանվում են հայ ազգային կուսակցությունները, հատկապես ՀՅ Դաշնակցությունը: Վերջինս մերարվում է յուրքական քանակի թիվունքում դիվերսիոն-հետախուզական քայլայիշ գործունեություն կատարելու մեջ: Իրականում նման ամբաստանությունները որևէ փաստական հիմք չունեն: Առ այսօր թուրք պատմագիրները ցուցադրում են դաշնակցա-

կան «ահաբենկիչներից» բռնագրավված գենքը, զինամթենրը և ուսմբերը, որն իբր հայտնաբերվել է սոստիկանության կողմից 1915թ-ին:

Նշենք, որ այդ լուսանկարները կեղծ են: Դրանք հորինվել են թուրքական իշխանությունների կողմից հայ բնակչության նկատմամբ իրականացվող զանգվածային բռնագաղթն ու կոտորածներն արդարացնելու համար:

Եթե՞ մի պահ պատկերացնենք, որ ընդդիմալսուների մեջադրանքներն իրական են, ապա նման «լայնածավալ քայրայիշ» գործունեություն աննկատ չեր մնա ոչ թուրքական և ոչ էլ զերմանական հատուկ ծառայությունների ուշադրությունից:

Անցյալի և ներկա թուրքական պատմագրությունը հայերի ինքնապաշտպանությամբ և կամավորական շարժմամբ «արդարացնում» են երիտթուրքական կառավարության կողմից ճնշնարկված արևմտահայերի զանգվածային աքսորը և կոտորածները՝ զնդասապանությունը: Հատկապես թուրք պատմաբանները և նրանց մի քանի արտասահմանցի գործընկերները կենտրոնանում են Վանի «ապստամբության» վրա: Վանի հայության ինքնապաշտպանությունը ներկայացվում է ամբողջապես խնդարյուրված և աղավաղված: Այն բնութագրվում է որպես կանխամտածված «լսուվություն»: Նրանք դրանում ամբաստանում են Դաշնակցությանը, որն իբր իրականացրել է մահմենդական բնակչության և զինվորների զանգվածային սպանություններ:

Թալնաթ փաշան իր հուշերում վաճնցներին ամբաստանում է ծրագրված ապստամբության մեջ, որը նպատակ ուներ օժանդակել ուսական բանակին: Նա գրում է. «...վաճնցի հայերը հրդեհել են Համուտ աղայի զորանոցը, ոստիկանական և քաղաքապահ ոստիկանության շենքները և քաղաքում վայրենի կոտորած սարքել»: Նախկին մեծ վնագիրը, որպեսզի արդարացնի թուրքական կանոնավոր բանակի անհաջողությունները, քաղաքը պաշտպանող հայերի թիվը հասցնում է հինգ հազարի:

Ժամանակից թուրք պատմաբանները և քաղաքագետները, ինչպես նաև նրանց մի շարք օտարենրկրյա գործընկերները, ճգնում են ապացուցել, որ հայերը Վանում նախահարձակ են եղել, որի հետևանքով իշխանությունները հարկադրված են եղել հակահարված տալ: Նրանք անընդհատ պնդում են, որ Վանի հայերն ապստամբել են ուսների հրամանով և դրանով հարկադրել թուրքական իրամանատարությանը զգալի ուժեր տեղափոխել ուղղմածակատից Վան:

Թուրք պատմաբան Էսադ Ուրասը, անդրադառնալով Վանի հնք-նապաշտպանությանը, գրում է. «Լասկածից վեր է, որ հայերը (Վանի-Ռ.Ս.) ապստամբեցին, ինչ որ տուսներն անցան սահմանը»: Նա միաժամանակ նշում է, որ թուրքական կողմը զգալի կորուստներ ունեցավ ապստամբությունը ճնշելիս: Անհերքելի և անժխտելի համարելով հայ-ռուսական «համագործակցությունը»՝ Է. Ուրասն առանց որևէ լուրջ փաստարկի փորձում է որոշակի կապ ստեղծել Վանի հնք-նապաշտպանության և ռուսական հարձակման միջև:

Սակայն հարց է ծագում, եթե հայերն իսկապես խռովություն էին ծրագրել, ապա ինչու չսպասեցին, որ ռուսներն ընդիուպ մոտենան քաղաքին և միայն այդ ժամանակ սկսեն իրենց գործողությունը: Ձե՞ս որ «սկսելով» 1915թ. ապրիլի 7-ին և շունենալով անհրաժեշտ քանակությամբ զենք, զինամթերք, պարեն և ռուսական զինական աջակցություն՝ նրանք փաստորեն վտանգում էին ձեռնարկի հաջողությունը: Սակայն Է. Ուրասն այստեղ էլ գտնում է հարմար պատասխան. «Սակայն ապստամբությունն ավելի վաղ բնմկվեց, քան ծրագրված էր»:

Թուրք պատմաբանները փորձում են ռուս-թուրքական ռազմաճակատում թուրքական քանակի պարտության հիմնական մեղքը բարդել հայ «ահաբեկիչների» վրա:

1915թվականի «ապստամբության» մեջ հիմնականում ամբաստանվում է Դաշնակցություն կուսակցությունը: Նրա հասցեին ինչում են տարբեր բնույթի և իրականությանը չհամապատասխանող ամբաստանություններ: Պարզապես ՀՅ Դաշնակցությունը կարողացավ կազմակերպել հայ ազգաբնակչության ինքնապաշտպանությունը: Ծառ դեպքերում, Դաշնակցության մի շարք անդամներ, չհամաձայնվելով դեկավար մարմնի որոշման հետ, անվերապահորեն կատարել իշխանությունների հրահանգները՝ հանձնել առկա զենքը և զինամթերքը, իրենք էին նախաձեռնում բնակչության ինքնապաշտպանության գործը: Այսպես օրինակ՝ Ուրֆայում, երբ տեղական իշխանությունները պահանջնեցին հանձնել զենքն ու զինամթերքը, շնորհիվ Մկրտիչ Յոթներքայրյանի նուանդուն գործունեության, հանձնեցին միայն իին, գրեթե անզործածելի ատրճանակներն ու հրացանները: Ինքնապաշտպանության համար անհրաժեշտ մարտական զենքը մնաց հայերի մոտ, որը նրանք օգտագործեցին թուրք և բուրդ ջարդարարներից պաշտպանվելու համար:

Վանի «ապստամբությունը» շահարկվել և շահարկվում է առ այսօր: Ամբաստանությունների առաջին հեղինակներն էին Թալենաթ և Էնվեր փաշանները: Նման անհեղեղ մեղադրանքներով նրանք նպատակ ունեին թարգնել տուս-թուրքական ռազմաճակատում թուրքական զինված ուժերի կրած ծանր պարտությունները և կենսական նշանակություն ունեցող տարածքների հանձնումը հակառակորդին և արդարացնել հայ բնակչության զանգվածային կոտորածները և բռնագաղթը:

Թուրք քաղաքական գործիչները, պատմաբանները, նրանց օտարազգի մի շարք գործընկերները, պնդում են, որ Վանի դեպքերը եղել են վահորոք ծրագրված ՀՅԴ-ի և ուսական հրամանատարության կողմից: Նրանք ջանում են ապացուցել, որ Վան քաղաքի և նահանգի հայության զինված ելույթները նպատակ են ունեցել օժանդակել ուսական գործին: Ընդդիմախոս Կողմը վկայակոչելով «ստոյգ» և «հավաստի» փաստեր են վկայություններ, փորձում է ապացուցել տուս-թուրքական համագործակցության փաստը:

Թուրքական կողմը նշում է, որ Վանի և նահանգի հայությունը լայնածավալ գործողություններ է ձննարկել հատկապես 1915թ. գարնանը, որը համընկել է ուսական կովկայան քանակի հարձակման հետ: Հայերը ուսներից ստացել են մեծ քանակությամբ զենք, զինամթերք և ումբեր: Վկայակոչվում են քազմաթիվ ընդհարումներ հայկական զինված ջոկատների հետ, որոնց ընթացքում թուրքերը կրել են զգալի մարդկային կորուստներ:

Հայերն իրականացրել են դիվնրսիոն գործողություններ՝ կտրել հեռագրաթելները, հարձակվել կառավարական հաստատությունների, զինվորական փորքաթիվ խմբերի վրա և այլն:

Հայկական զինված կազմավորումներն ակտիվացնում են իրենց գործողությունները հատկապես այն ժամանակ, երբ ուսական Բայազետի ջոկատը՝ գեներալ Ա. Մ. Նիկոլասի գլխավորությամբ, սկսում է հարձակումը Վանի ուղղությամբ:

Ընդհանուր առմամբ ներկայացնելով նման անհիմն և որևէ իրական փաստերով չհիմնափորված մեղադրանք, ընդդիմախոս Կողմը «անուշադրության» է մատնում մի քանի կարևոր և ծանրակշիռ փաստեր, որոնք զալիս են ապացուցելու հակառակը:

Փորձմաք քննել դրանցից մի քանիսը:

Ակսած 1914թ. աշնանից և հատկապես 1915թ. գարնան սկզբից, Վանի նահանգի երիտթուրքական իշխանությունները կազմում են

քրդական անկանոն ջոկատներ, զինում և դրդում հարձակվել հայկական բնակավայրերի վրա: Կարծակումներին մասնակցություն են ունենում ոստիկանական և զինվորական ստորաբաժանումները:

Ինչպես ցոյց է տալիս դեպքերի և փաստերի վերլուծությունը, հայերը միայն պաշտպանվել են: Նրանց կողմից որևէ հարձակողական գործողություն չի իրականացվել: Մարտերը տեղի են ունեցել հայկական տարբեր բնակավայրերում կամ նրանց շրջակայքում:

Վասպորականի հայության դեկավարությունը, հանձինս ՀՅԴ կուսակցության, մշտապես աշխատել է կանխմնլ բախումները և բանակցությունների միջոցով լուծել ծագած այս կամ այն խնդիրը: Դաշնակցության աչքի ընկնող գործիչներ՝ Խշանը, Վռամյանը են այլոր, դավադրաբար սպանվեցին թուրքերի կողմից: Իր հերթին երիտթուրքական իշխանությունները ցանկացած պատրիվակ օգտագործում էին, որպեսզի հայությանը զրկեն դեկավարող և կազմակերպող ուժից: Նման քայլերից մեկն էր Վանի հնչակյան դեկավարության ծերբակալությունը ու սպանությունը:

1915թ. ապրիլ-մայիս ամիսների վան քաղաքում ծագալված կրիվները վերլուծելիս, հստակ երևում է, որ ինքնապաշտպանության դեկավարները որդեգրել էին բացառապես պաշտպանական մարտավարություն: Նրանց ձեռնարկած առանձին հարձակումները նպատակ են ունեցել ամրապնդել պաշտպանական դիրքերը, այլ ոչ թե նվաճել նոր բնագծեր՝ հարձակումը շարունակելու համար: Նման մարտավարությունը շատ դեպքերում դժվարացնում էր ինքնապաշտպանությունը:

Վանի Այգեստան և Քաղաքամեջ թաղամասերի վրա թուրքական հարձակումը սկսվում է 1915թ. ապրիլի 7-ին, իսկ ուսական Բայազետի ջոկատի առաջխաղացումը՝ ապրիլի 17-ին: Վան հասնելու համար նրանք դեռևս պետք է մարտերով անցնեին Թափարիզի դժվարացանելի լեռնանցքը:

Ինչպես վկայում են արխիվային վավերագրերը, Բայազետի ջոկատը նպատակ չի ունեցել զրավել Վանը, թեև ուսական իրամանատարությունը տեղեկություններ ուներ հայ բնակչության ինքնապաշտպանական կրիվների մասին: Գեներալ Ա. Մ. Նիկոլակին հանձնարարվել էր հետապնդել Դիլմանի ճակատամարտում պարտություն կրած Խալիլ բեյի դիվիզիան: Եվ ենք հայտնի է դառնում, որ Խալիլին հաջողվել է խուսափել շրջապատման մեջ ընկնելուց, Բայազետի ջոկատը տեղա-

Կայփում է Բերկրի-Կալեում: Իրականում գեներալ Ա. Մ. Նիկոլաևը հրաման չէր ստացել առաջանալ դեպի Վան:

Այսպիսով, Կովկասյան բանակի հրամանատարությունը նպատակ չի ունեցել գրավել Վանը: Իսկ ինչո՞ւ ի վերջո Բայազետի ջոկատը շարժվեց Վանի ուղղությամբ, ինչո՞ւ ուսական հրամանատարությունը որոշեց գրավել Վանը: Ինչպես վկայում են արխիվային փաստաթղթերը, ուստինքին այդ քայլին դրդել են հայ կամավորները, ավելի ստույգ՝ Արարատյան զնդի հրամանատարներ Վարդանը, Դրոն, Համազասպը և Զերին: Նրանք տեսականալով, որ գեներալ Ա. Մ. Նիկոլաևը չի պատրաստվում շարունակել առաջխաղացումը, քանի որ հրաման ունի մնալ Բերկրի-Կալեում, որոշում են չենթարկվել հրամանին: Վարդանի հրամանով, Դաշնակցական Խնչոյի (Խաչատոր Ամիրյան-Գևորգյան) հրամանատարությամբ, առանձնացվում է 150 հոգու կազմված հեծելավաշտ՝ դեպի Վան արշավելու համար: Նրան հետևելու էր միայն Արարատյան գունդը: Եվ միայն այն քանից հետո, երբ լուր ստացվեց, որ Արարատյան գունդը գտնվում է Զանիկում, մայիսի 3-ին գեներալ Ա. Մ. Նիկոլաևը շտաբուն միանալ նրանց:

Այսպիսով, 1915թ. ապրիլ-մայիս ամիսների դեպքերի համառոտ քննարկումը բերում է հետևյալ եզրակացությունների:

Վան քաղաքի և հատկապես նահանգի ինքնապաշտպանությունը սկզբնական փուլում կրել է տարերային բնույթ և չի եղել վաղօրոք ծրագրված:

Վանի հայությունը որևէ կապ չի ունեցել ուսական հրամանատարության հետ:

Վանի և նահանգի հայության ինքնապաշտպանությունը չի եղել որևէ պլանավորված գործողության արդյունք:

Թուրքերը չկարողացան ճնշել Վանի հայության դիմադրությունը, քանի որ քաղաքը պաշարած թուրք-քրդական ուժերին չկարողացավ օգնության հասնել զնդապես Խալիլ բեյի դիվիզիան: Վերջինս, 1915թ. ապրիլի 18-ին պարտություն էր կրել գեներալ Ֆ. Ի. Նազարբեկովի (Թովմաս Նազարբեկյան) Կովկասյան 2-րդ հրաձգային բրիգադից և նրա կազմում գործող Հայկական 1-ին կամավորական խմբից:

Ուստինքի առաջխաղացումը նպատակ ուներ հետապնդել և շրջապատել Խալիլ բեյի դիվիզիան: Ուստի հրամանատարությունը այդ ժամանակ Վանը գրավելու ծրագիր չուներ:

Վանը ազատագրվեց շնորհիվ Արարատյան զնդի հրամանատարա-

կան կազմի՝ Վարդանի, Դրոյի, Համազասպի և Քեռու վճռականության և հաստատակամության:

Վանի և նահանգի հայությունը փրկվեց իր հերոսական դիմադրության, իսկ կամավորների և ռուսական ուժերի շնորհիվ:

Վանի ազատագրումից հետո ռուսական հրամանատարությունը հիմնում է Վանի ժամանակավոր վարչություն, որի կառավարիչ (նահանգապետ) է Նշանակվում Արամ Մանուկյանը:

Նահանջը կատարվեց այնքան հապշտապ, որ հնարավոր շնորհակագմակերպել քաղաքի ինքնապաշտպանությունը: Նահանջի հետևանքով Վասպուրականի հայությունը զգալի մարդկային ու նյութական կորուստներ կրեց: Ռուսական հրամանատարությունը որևէ կերպ չաջակցեց հայերին: Միայն մի քանի զորամասների հրամանատարներ և կազակներ, սեփական նախաձեռնությամբ, հայ կամավորների հետ օգնում և պաշտպանում էին փախստականներին՝ կանաց և երեխաներին:

Զնայած նյութական և մարդկային ծանր կորուստներին, այնուամենայիվ, կամավորական զործիչների համարձակ զործողությունների շնորհիվ փրկվում են մոտ 200 հարյուր հազար հայեր: Կայերի հետ Վասպուրականից հեռանում են նաև ասորիներն ու եզրիները:

Անցյալի և ներկա մի շարք քաղաքացենտների և պատմաբանների շուրջներից լսվում են անհարկի մեղադրանքներ ՀՅԴ հասցեին, թե իբր կուսակցությունն էր պատճառը, որ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին երիտթուրքական իշխանություններն իրականացրեցին հայ բնակչության զնուազանությունը: Ամբաստանությունները վերաբերում են ռուս-թուրքական ռազմաճակատում զործող հայ կամավորական խմբերին և արևմտահայերի կազմակերպած ինքնապաշտպանական կողմերին:

Օտարենկրացի ականատեսների՝ քարձրաստիճան դիվանագետների, միսիոներների, զինվորականների և այլոց ճնշող մեծամասնությունը հստակ պնդում է, որ թուրքերը հայերին կոտորել են միայն ու միայն Հայկական հարցին վերջ տալու, հայերի ուննցվածքին տիրանալու և «Մեծ Թուրան» երևակայական պետության ստեղծման համար: Իրականությանը չեն համապատասխանում ՀՅԴ-ին ներկայացվող անհիմն ամբաստանությունները: Շնորհիվ Վարդանի, Քեռու, Դրոյի և Համազասպի ընդունած որոշման՝ փրկվեց Վասպուրականի հայության մեծ մասը: Դժվար չէ պատկերացնել, թե ինչ կկատարվեր, եթեն

Նրանք ենթարկվելին հրամանատարության հրամանին և մնային Բնրկրի-Կալեուս:

1914-1916թթ. Օսմանյան կայսրության տարածքում գտնվող Արևմտյան Հայաստանի և Փոքր Սահայի հայաբնակ շրջանների հայությունը ենթարկվեց վախորք ծրագրված զանգվածային կոտորածի և բռնագաղթի, որի տրամաբանական պատասխանը պետք է լիներ ինքնապաշտպանության դիմելը:

1915թ. ապրիլ-մայիս ամիսներին Վանի պաշտպանությանն ականատես ամերիկացիների, զերմանացիների և իտալացիների վկայությամբ տեղի հայերը չեն ապստամբել, այլ դիմել են ինքնապաշտպանության, քանի որ ցանկանում էին պաշտպանել իրենց կյանքը, ընտանիքը և ունեցվածքը:

Նշվածն ամբողջությամբ վերաբերիս է նաև Արևմտյան Հայաստանի այլ վայրերի հայ բնակչության ինքնապաշտպանությանը: Ինչ «ապստամբության» մասին խոսք կարող է լինել մարտական գործողություններից բավականին հետո գտնվող Մուշում, Սասոնում, Շապին-Գարահիսարում, Սունտիհյում և Ուրֆայում:

Զպետք է մոռանալ, որ 1919թ. Կ. Պոլսում թուրքական կառավարության կողմից կազմված Զինվորական դատարանները հեռակա կարգով մահապատժի դատապարտնեցին «Միություն և առաջադիմություն» կուսակցության մի շարք պարագլուխների: Առ այսօր նրանց դատավճիրը չնյալ չի հայտարարվել:

Ակսած 1914թ. դեկտեմբերից մինչև 1915թ. մայիս հայկական մի շարք գյուղերում տեղի են ունենում ինքնապաշտպանական կրիվներ: Նահանգի հայության կազմակերպած ինքնապաշտպանական գործողությունները իրենց վրա են գրավում թուրքական և քրդական զգալի ուժերի, որը որոշ չափով հեշտացնում է Վան քաղաքի հայկական թաղամասերի ինքնապաշտպանության գործը:

1914թ. դեկտեմբերին հարձակման ենթարկվեց Հայոց ձորի Աթանանց գյուղը, որի բնակչությունը դիմեց ինքնապաշտպանության: Այն բանից հետո, երբ սպանվեց հարձակումը դեկտավարող թուրք պաշտոնյան, հրոսակները նահանջեցին: Դեպի Աթանանց են ուղղվում քրդեր և ժանդարմական ջոկատ: Գյուղը շրջապատվում է: Մթության քողի տակ հայերին հաջողվում է դուրս գալ գյուղից և ապաստանել հարևան հայկական գյուղերում: Աթանանցում մնում են միայն զինված տղամարդիկ, իիմնականում երիտասարդներ: Թուրք-քրդական բոլոր գրոհ-

ները որևէ էական արդյունք չեն ունենում: Զկարողանալով կոտրել հայերի դիմադրությունը՝ հակառակորդը հետանում է:

1915 թ. փետրվարի 13-ին քրդական ջոկատը գրոհում է Արճից զավառակի Առեն գյուղը: Մարտերից մեկի ժամանակ սպանվում են ցեղապետ Բըշարե Զաթոյի որդին, ներայրը և 18 հոգի: Ելուզակները, նման կորուստ կրելուց հետո, հարկադրված են լինում նահանջել:

Թիմարի զավառում ինքնապաշտպանական մարտերը հիմնականում անհաջող ելք են ունենում: Գլխավոր պատճառը գենքի և զինամթերի պակասն էր: Գյուղացիների մեծ մասը չէր տիրապետում զենքին: Հայերը դիմադրում են այնքան ժամանակ, մինչև որ սպառվում էր զինամթերքը, որից հետո հակառակորդը ներխուժում և ոչնչացնում էր բնակչությանը: Որոշ գյուղերի բնակիչներ, հավատալով տեղական իշխանությունների խոստումներին, թույլ չէին տալիս գյուղի նրախասարդներին որևէ դիմադրություն գույց տալ: Նման դեպքերում թուրքերը ազատ հնարավորություն էին ունենում հաշվենարդար տեսնել խաղաղ բնակչության հետ:

Ի տարբերություն Թիմարի, Արճակի զավառակը կարողանում է ի մի բներն իր ունեցած բոլոր ուժերը և դիմագրավել թշնամուն: Տնի ինքնապաշտպանության ղեկավար Շիրին Եղիազարյանի կազմակերպած դիմադրության շնորհիվ փրկվում է մոտ 1000 հոգի:

Ապրիլի 8-ին քրդական մեծաթիվ ջոկատը գրոհում է Բերկրի զավառի Գործող գյուղը: Տղամարդիկ 15 օր շարունակ հնտ են մղում քրդերի անընդմեջ հարձակումները: Սակայն, երբ սպառվում է զինամթերքը, ելուզակներին հաջողվում է ներխուժել գյուղ և սրի քաշել բոլորին:

Կատաղի ինքնապաշտպանական մարտեր են տեղի ունենում Վարագա վանքի շրջկայրում: Վանքը գտնվում է համանուն լեռան վրա, նրա երկու զագայթեների միջև: Լեռան հյուսիսային և հարավային ուղղություններից քացվում են խորունկ ձորեր: Հյուսիսային ձորի մեջ գտնվում է սուրբ Գրիգոր, իսկ արևմտյան զագաթի հարավային լանջին՝ Վարագա վանքը: Վերջինս ուներ ուղղմավարական նշանակություն, քանի որ Վան քաղաքի հայության ինքնապաշտպանության պարտության դեպքում բնակչությունը կարող էր ապաստանել այստեղ: Բացի այդ, Վարագի հյուսիսային և հարավային լանջերով կարելի էր հասնել Արճակ-Պարսկաստան և Խոշաբ-Բաշկալե: Լավ հասկանալով այդ ամենը՝ Վանի նահանգապետ (վալի) Զադենթ քեյը այստեղ ժամանակական ջոկատ էր տեղակայել: 1915 թ. ապրիլի 7-ին Շուշանց, կուռուպաշ



### Արմենակ Եկարյան

և Նորօյուղ գյուղերի ինքնապաշտպանական ջոկատները համատեղ ուժերով քշում են ժանդարմներին: Կարճ ժամանակում Վարազա վանքում ապատանում է 6 հազարից ավելի մարդ:

Տեղի ինքնապաշտպանական ուժերին օգնության է զայխ Արմենակ Եկարյանի խումբը: Ապրիլի 12-ին նրանք համատեղ ուժերով ազատագրում են Զրիվանդաց և Զորովաց գյուղերը: Գործողությունը հաջողվում է, սակայն թուրքական կանոնավոր բանակի զորամասները իրենտանու աջակցությամբ

կարողանում են վերագրավել նշված բնակավայրերը:

Անդրադառնալով Վանի նահանգի ինքնապաշտպանական մարտերին, դեմքների ականատես ամերիկյան միսիոներ Քլարենս Աշլը հայտնում է, որ թուրքերին համեմատաբար թույլ դիմադրություն է գույց տրվում, քանի որ հայ տղամարդկանց մեջ մասը զորակոչվել էր օսմանյան բանակ: Մոկսը փրկվում է կրտորաձներից՝ շնորհիվ քորդ Մուրթուլլա բնիք:

Վանի նահանգի հայկական բնակավայրերից առավել համառ և երկարատև դիմադրություն է գույց տալիս Շատախ գավառի հայությունը: Գավառը գտնվում է Վանա լճի հարավային մասում: Շատախի կենտրոնն էր Թաղը՝ բաղկացած 220 տնից: Վերջինս բաժանվում էր երեք թաղամասների՝ Վերին, Ներքին և Ջրաղացի: Ա. Եկարյանը վկայում է, որ Շատախը հայտնի էր օսմանյան կայսրության դեմ իր ըմբռու կնքվածքով: Նա գավառը համեմատում է Զեյթունի հետ:

Թաղի հայության ընդվզման համար առիթ է հանդիսանում տեղի հանդիսանում կումիտենի աշքի ընկնող գործիչ, ուսուցիչ Հռվենի Զոլոյանի և հինգ ընկերների ձերբակալությունն ու մահապատիժը: Շատախիցիները դիմում են նախազգուշական քայլերի: Ստեղծվում է Զինվորական մարմին, որի ղեկավար է ընտրվում Բաղդիկ (Ազատ) Սիմոնյանը: Բնակչությունը սկսում է պաշտպանական դիրքեր և ամրություններ կառուցնելու: Թաղը բաժանվում է ութ դիրքերի՝ 114 մարտիկներով: Սահակ Զոլոյանի հրամանատարությամբ կազմվում է 30 հոգուց բաղկացած պահեստագոր, որը պետք է մնար Զինվորական մարմնի ննդակայության ներքո:

Սկզբնական շրջանում թուրքական իշխանություններն ունեին 150 զինվոր և երկու թնդանոթ: Կարճ ժամանակ անց օգնական ուժ է ստացվում Վանից: Թալանի ակնկալիքով հավաքվում են մոտ երկու հազար բուրդ: Նշված ուժներով հակառակորդը չի կարողանում որևէ հաջողության հասնել:

Տեղեկանալով Ծատախի հայության դիմադրության մասին՝ զազագած Զևսիթ բեյը իրամայում է իր անձնական ջոկատին կոտրել զավադի ողջ հայությանը:

Ապրիլի 5-ին, 6-ին համալրում ստանալով՝ հակառակորդը անցնում է լայնածավալ հարձակման: Սակայն հանդիպելով հայերի կազմակերպված դիմադրությանը, ծանր կորուստներ կրելով, նահանջում է: Իր հերթին շատախցինները նախաձեռնում են հարձակողական գործողություններ:

Ապրիլի 21-ին Թաղին օգնության է զալիս Հայոց ձորից Խարականցի Լևոնի խումբը՝ ուժնեղացնելով տեղի պաշտպանությունը: Ապրիլի 22-ին հակառակորդի շարքները համալրվում են ի հաշիվ քրդական նոր ջոկատների:

Ապրիլի 30-ին սկսված թուրք-քրդական գրոհը հարկադրում է ինքնապաշտպաններին թողնել մի քանի դիրքեր: Հայերն ամրանում են վաղօրոր պատրաստված պահեստային դիրքերում: Թշնամին համառ գրոհներ է նախաձեռնում, փորձելով գրավել ջրադաշտ, որտեղից ստացվում էին այլորի հիմնական պաշարները: Ինքապապաշտպանները են մորում հակառակորդին՝ ոչնչացնելով 15 հոգու:

Զնայած ձեռք բերված մարտական հաջողություններին՝ իրադրությունն օրենցօր դառնում էր սպառնալից: Թուրք-քրդական ուժները աստիճանաբար ուժնեղացնում են ճնշումը հայկական դիրքերի վրա: Ինքնապաշտպանության մասնակիցներից մեկի՝ Շ. Աբրիկյանի վկայությամբ. «Թաղի դրությունը շատ հուսահատական էր»:

Հակառակորդը, Թաղի պաշտպանությունն էլ ավելի թուլացնելու նպատակով, դիմում է նենազ քայլի: Նրանք բռնի ուժով հարկադրում են Թաղ մտնել շրջակա հայկական զյուղերի ողջ մնացած կանանց, երեխաներին, դրանով սաստկացնելով պարենի ճգնաժամը:

Զնայած ստեղծված ծանր իրավիճակին՝ հայ մարտիկները չեն կորցնում ոգու արիությունը: Ծատախցինները որոշում են նույնիսկ ինքնաշեն թնդանոթ պատրաստել, որն իրագործում են հայր և որդի Նալբանդյանները: Նրանք պատրաստում են երկու թնդանոթ՝ մեկը մեծ, մյուսը՝



სიმონ ჯაფარიშვილი

փոքր: Դրանցից առավել արդյունավետը փոքրն էր, որի արձակած ոմբազնդերը բավականին խուճապ առաջացրին հակառակորդի շարքերում: Կանայք և աղջիկները, գործի գիտակ մասնագետի գլխավորությամբ, պատրաստում էին սև վառող՝ լրացնելով ինքնապաշտպանների վառողի պաշարը:

Թուրքական հրետանին անընդմեջ ոմբակոծում էր հայկական ամրությունները:

1915 թ. մայիսի 2-ին թուրք-քրդական բազմաքանակ ուժերը նոր հարձակում

են ձեռնարկում Թաղի պաշտպանական դիրքերի վրա: Ինքնապաշտպաններին հաջողվում է ուժերի գերազույն լարումով ետ մղել նրանց:

Մայիսի 8-ից 9-ը գավառի զանազան մասներից Թաղ են շտապում ինքնապաշտպանական խմբեր: Այս հանգամանքը հնարավորություն է ընձեռում լրացնել մարտիկների շարքերը, և կասեցնել հակառակորդի գրոհները՝ զգալի կորուստներ պատճառելով նրան:

Շուտով շատախցիները զգում են, որ թուրք-քրդական հարձակումների թափը սկսում է թուլանալ: Լուրեր են հասնում, որ հայ կամավորական խմբերը և ռուսական բանակը մտել են Վան, և հակառակորդը խուճապահար սկսել է փախչել:

Մայիսի 14-ին Հայկական II ջոկատը, Դրոյի (Դրաստամատ Կանայան) հրամանատարությամբ, մտնում է Շատախ:

Մոտ ամիս ու կես տևած մարտերի ընթացքում ինքնապաշտպանների կորուստը հասնում է 150-ից 160 հոգու, իսկ հակառակորդինը՝ 500- 600-ի:

Թաղից առանձին, ինքնապաշտպանություն է կազմակերպում Շատախի գավառի Փեսանդաշտ գավառակը: Այն բաղկացած էր Առնե, Կայնամերան, Շիրան և Լաղազիս հայկական գյուղներից:

Տեղի հայկական ուժերը, դաշնակցական Լևոն Շաղոյանի գլխավորությամբ, տեղեկանալով Թաղի վրա թուրքական հարձակման մասին՝ շտապում են օգնության: Սակայն լուր ստանալով, որ Փեսանդաշտը ննթարկվել է հարձակման, վերադառնում և կազմակերպում են տեղի ինքնապաշտպանությունը:

Փեսանդաշտի պաշտպանական դիրքերը Լ. Շաղյանի կողմից բաժանվում է չորս գոտու: 1915թ. ապրիլի 14-ից 16-ը հակառակորդը մի քանի անգամ հարձակումներ է ձեռնարկում, սակայն հանդիպնով հայերի կազմակերպված դիմադրությանը՝ հարկադրված նահանջում է:

Թուրք-քրդական ուժերը փորձում են Արտոս լեռան գագաթով անցնել հայերի թիկունքը: Սակայն ինքնապաշտպանները կուհենով հակառակորդի մտադրությունը՝ ծուղակն են գցում նրանց: Արդյունքում՝ ելուզակները, հինգ սպանված և բազմաթիվ վիրավորներ տալով, փախուստի են դիմում:

Անհաջողություն կրենով կրիվներում հակառակորդը դիմում է փորձված մարտավարությանը. հարկադրում է Փեսանդաշտ անցնել մոտ 1200 հայ կանանց ու երեխաների: Փեսանդաշտցիները, չնայած իրենց ունեցած սույն միջոցներին, աշխատում են հայրենակիցներին ապահովել սննդամթերքով:

Ի վերջո հակառակորդի հարձակումներն աստիճանաբար նվազում են: Մայիսի 10-ին Փեսանդաշտ հասան հայ կամավորները, որով վերջ տրվեց տեղի հայության տառապանքներին:

Առավել համառ և երկարատև մարտեր են մղվում Վան քաղաքի հայկական թաղամասերում:

1914 թ. սկզբներին Վանի բնակիչների թիվը 41 հազար էր, որից մոտ 23 հազարը հայեր էին, իսկ 18 հազարը՝ մահմեդական: Քաղաքի երկու հայկական հատվածները միմյանցից 5-ից 6 կիլոմետր հեռավորության վրա էին: Այդ միջանկյալ տարածքում բնակվում էին հիմնականում թուրքեր: Այգնատան ուներ 20 հազար, իսկ Քաղաքամեջը՝ 2500 բնակիչ:

Նահանգում տիրող վիճակը, հայ ազատազրական շարժման ականվոր գործիչներ Իշխանի (Նիկողայոս Պողոսյան) և Վրամյանի (Օնիկ Դերձակյան) դավադրական սպանությունը, հարկադրում են հայությանը ջարդից խուսափելու ուղիներ փնտրել: 1915թ. ապրիլի 5-ից քաղաքի արվարձաններում և թուրքական թաղամասի հարևանությամբ բնակվող հայկական ընտանիքները տեղափոխվում են



Դավիթ Փափազյան




Փանոս Թերլեմեզյան

Այգեստանի կենտրոն: Լրպած տները թալանվում են քուրքերի կողմից: Հայկական թաղամասերը Ձևդեմք բնի հրամանով շրջապատվում են կանոնավոր բանակի զորամասերի կողմից, բացի Շուշանց գյուղ տանող ճանապարհից: Նահանգապետոր բացահայտ սպառնում է հաշվեհարդար տեսնել Վանի հայության հետ՝ պարծենալով, որ դրա համար իրենից կպահանջվի ընդամենը երեք օր: Ապրիլի 4-ից խօսվում է կապը Այգեստանի և Քաղաքամեջի միջև: Նոյն գիշեր հակառակորդի զինվորները

գրավում են Արարք կոչվող թաղամասում գտնվող հայկական եկեղեցին, դպրոցը և անզիական հյուպատոսարանը: Այս երեք շինությունները նրանց կողմից վեր են ածվում ուժեղ հենակետների:

Վանեցիները հույսեր էին փայփայում, որ կիաջողվի խուսափել բախումից: Նրանք դիմում են ամերիկյան միսիոներներ ք. Աշըրին և Էռնեստ Յարուիխն՝ խնդրելով տեսակցել նահանգապետի հետ և փորձն գործն արյունահեռության չհասցնել: Վանեցիները հատկապես մեծ հույսեր էին կապում ք. Աշըրի հետ, քանի որ նա փոքր հասակից գիտեր նահանգապետին, երկար տարիներ նղել էր Զևդերի ծնողների անձնական քժիշկը, քարեկամական հարաբերությունների մեջ էր նրանց հետ: Հանդիպման ժամանակ Ձևդեմքն սպառնում է. «Եթե հայերը մի կրակոց արձակեն... Ես քաղաքը կոչնչացնեմ, շթողնելով իմ ծնկից բարձր երեխա»: Նա միաժամանակ առաջարկում է միսիոներներին «ապահովության» համար իրենց շենքերում տեղավորել 50 զինվոր և մեկ թնդանոթ: Սակայն ամերիկացիները հրաժարվում են:

Զևդերի հետ տեղի են ունենում ևս մի քանի հանդիպումներ, որոնց մասնակցում են նաև Վանում իտալական հյուպատոսական զորձակալ Գ. Սբորդոնին, առաջնորդական փոխանորդ Եզնիկ



Կայծակ Առաքել



**Թուղարացի Գրիգոր**

վարդապետ Ներկարարյանը, որտեղ նահանգապետը հայտարարում է, որ իր նպատակն է քաղաքի հայության ոչնչացումը:

Սպառելով վերջին կայծկլտացող հոյսը, մի կողմ թողնելով կուսակցական տարածայնությունները, վանեցիները որոշում են համախմբվել և դիմել ինքնապաշտպանության: 1915 թ. ապրիլի 5-ին կազմվում է «Վանի հայ ինքնապաշտպանության զինվորական մարմին», կարճ՝ Զինվորական մարմին:

Վերջինիս կազմի մեջ սկզբնական շրջանում մտնում են Արմենակ Եկարյանը (նախկին արմենական, սահմանադիր-ռամկավար), Կայծակ Առաքելը (Տիգրան Աքաջյան), Բուլղարացի Գրիգորը, Երկուսն էլ «ՅՅ» անդամ: Հնտագայում Զինվորական մարմնի կազմում ընդգրկվում են հանրածանաչ նկարիչ Փանոս Թերլեմեզյանը (անկուսակցական), Արամ Մանուկյանը (Սարգիս Հռվիաննիայան, դաշնակցական): Արամի առաջարկությամբ Զինվորական մարմնի դեկանը է նշանակվում Ա. Եկարյանը:

Ժամանակակիցները՝ հայերը, թուրքերը և Վանի պաշարմանը մասնակցած գերմանական բանակի սպա Ռաֆայել դե Նոզարեսը, ինքնապաշտպանության գլխավոր կազմակերպիչ և ոգեշնչող համարում են Արամ Մանուկյանին:

Զինվորական մարմնին կից ստեղծվում են նաև այլ ստորաբաժանումներ, որոնք կոչված են ապահովելու հաջող ինքնապաշտպանությունը: Կազմվում է «Ամրաշեն խումբ»՝ Շավարշ Հռվիկյանի, Ազատ Խորենյանի, Հարություն Լաքավյանի և Գրիգոր Պանիրյանի ղեկավարությամբ, որտեղ ընդգրկվում են եիմնականում նահանգի զանազան գյուղերից Այգեստանում ապաստանած մոտ 1800 անգեն տղամարդիկ: Նրանց կողմից կառուցվում են պաշտ-



**Յայկակ Կոսոյան**

պանական զանագան կառույցներ և խրամատներ: Մարտերի ընթացքում ամենաշատ զոհերը այս խումբն է տալիս:

Հաջորդ ծառայությունը Օժանդակ մարմինն էր, որն իրականացնում էր կապը Զինվորական մարմնի և դիրքերի միջև: Նրա անդամներն էին՝ Դավիթ Փափազյանը, Վահրամ Տեր-Պետրոսյանը, Կարապետ Բեյլերյանը և Գաբրիել Սեմերջյանը: Հաջորդը՝ Հայթայթիչ հանձնաժողովն էր՝ Գևորգ Սուճյանի ղեկավարությամբ, որը պետք է տնօրիներ զինամթերքից հետո երկրորդ կարևոր խնդիրը՝ սննդամթերքի հայթայթման և բաշխման գործը:

Այս աշխատանքներին կամավոր մասնակցում էին ամերիկյան միսիոներուիններ Ռոջերսը և Շլիմանը: Ապա ստեղծվում է «Հայ ինքնապաշտպանության կարմիր խաչը»: Այն ղեկավարում է վիրաբույժ կարապետ Թորգոմյանը: Նրան գրձուն աջակցություն է գույց տալիս մասնագիտությամբ բժիշկ Ք. Աշրը: Նա ինքնապաշտպաններին տրամադրում է ամերիկյան հիվանդանոցի դեղատունը՝ մերժելով այն հանձնել թուրքներին:

Չափազանց կարևոր էր զենքի և զինամթերքի պատրաստման և վերանորոգման արհեստանոցի ստեղծումը:



Այգեստանի շինարարական ջոկատը

Այստեղ ընդգրկվում են 50-ից ավելի արհեստավորներ՝ ուշերիչներ, փորագրիչներ և այլոք: Այս աշխատանքները դեկավարում է պրոֆեսոր Միքայել Մինասյանը: Նա և իր օգնականներ Վարդան Բաբիկյանը և Հարույտն Կարավայանը կարողանում են պատրաստել անծովս վառող:

Կազմվում է Տեղեկատոր դիվան՝ Զինվորական մարմնի հրամանները, ազդագրերը, դիմումները և կոչերը ժողովրդին ու մարտիկներին հասցնելու նպատակով: Անդամներն էին՝ Հմայակ Մանուկյանը, Արմենակ Փոխարյանը, Օնիկ Միքայելյանը, Հրանտ Գալիկյանը և ուրիշներ:

Այզենտանի ներքին կարգ ու կանոնը վերահսկելու համար ստեղծվում են ոստիկանություն և դատարան: Ոստիկանապետ է նշանակվում Գրիգոր Ճոնյանը: Նրա ենթակայության ներքո կային 50 ոստիկան: Բնակչությունը մեծագույն հարգանքով էր վերաբերվում ոստիկանությանը և անխոս կատարում նրանց հրահանգներն ու գուցումները:

Թաղամասի սանիտարական վիճակը և աղքահանության գործը հսկելու համար ստեղծվում է Այզենտանի Քաղաքապետարանը: Քաղաքապետն էր Պետրոս Մեզենյանը, օգնականներն էին Խաչիկ Զենորյանը և Ղևոնդ Խանջյանը (Վկ(ք)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Աղասի Խանջյանի հայրը):

Այզենտանի ինքնապաշտպանության մարմինների ստեղծման և կազմակերպման գործին աջակցում է Է. Յարոսուն: Վերը նշված ժառայությունների ստեղծումը տևում է երեք օր:

Այզենտանը բաժանվում է յոթ պաշտպանական շրջանների՝ 79 դիրքով: Յուրաքանչյուր շրջան ուներ իր շրջանապետը: Դիրքերն ունեին իրենց հրամանատարները, կապավորը, ենտախույզը, սանիտարական և ամրություններ վերանորոգող լիմբերը: Ինքնապաշտպանների շարքերը համալրվում են նահանգի տարբեր հայկական բնակավայրերից թաղամասում պատսպարվածներով: Հայ մարտիկների թիվը հասում է 1053-ի: Նրանք զինված էին տարբեր սիստեմների 505 հրացաններով և 549 ատրճանակներով: Անբավարար էր զինամթերքի պաշարը: Ավելի ուշ այզենտանցիներին հաջողվում է կազմակերպել նրա արտադրությունը՝ օրական պատրաստելով երկու հազարից մինչև չորս հազար գանազան տրամաչափի փամփուշտներ, ինչպես նաև երկու հրասանդ:

Հակառակորդն իր տրամադրության ներքո ուներ մոտ 12 հազար զինվոր: Կար 12 նորագույն և մի քանի տասնյակի հասնող տարբեր տրամաչափի ողորկափող թնդանոթներ: Հետազայում Էրգումից լրա-

ցուցիչ ուղարկվում են երկու գումարտակ և չորս լեռնային թնդանոթ: Սպասավում էր նաև Խալիլ բեյի Հավաքական դիվիզիայի՝ 10-ից 12 գումարտակ, 12 թնդանոթ և մոտ 6 հազար քրդական անկանոն ջոկատների ժամանումը: Սակայն Դիլմանի ճակատամարտում (1915թ. ապրիլի 15-ից 18-ը) պարտություն կրելով, Խալիլը հետափնդվելով գեներալ Թովմաս Նազարենկյանի ուժերի (Կովկասյան 2-րդ հրաձգային բրիգադի, որի կազմում էր Հայկական I կամավորական ջոկատը) և գեներալ Ա. Մ. Նիկոլաևի Բայազետի ջոկատի կողմից, նահանջում է:

Ապրիլի 5-ին Զինվորական մարմինը հատուկ շրջաբերականով հրահանգ է հորում դիրքերում գտնվող մարտիկներին, որտեղ ներկայացնում է նրանց հիմնական մարտավարությունը, որը լինելու էր զուտ պաշտպանական:

1915թ. ապրիլի 7-ին սկսվում է Վանի նշանավոր ինքնապաշտպանությունը: Նախահարձակ են լինում թուրք զինվորները: Փոխադարձ հրածգությունը շարունակվում է մինչև ուշ գիշեր: Նազարեթ Պուրնությանի հրամանատարության ներքո գտնվող խումբը, հակազդող կազմակերպելով, կարողանում է հակառակորդից գրավել Շահպետերներ կոչված դիրքը:

Գիշերը հակառակորդն անսպասնի ընդհատում է հրածգությունը, սակայն կես ժամ անց կրկին վերսկսում է՝ կատաղի մոլեգնությամբ և ուժգնությամբ: Մասնակիցներից մեկը վկայում է. «Անհնարին է պատկերացնել այդ դժոխային աղմուկի ամբողջ կատաղությունը: Մարդկային լսելիքը ուղղակի կը դատապարտվեր և ամեն մարդիկը անգիտակցորեն կը փակեր իր աչքն ու ականջը...»:

Ապրիլի 7-ին Զինվորական մարմինը կոչ է հորում նաև թուրք համարադրացիներին՝ պարզաբանելով իրենց ինքնապաշտպանության պատճառը: Կոչում ընդգծվում է, որ հայերի թշնամին Ջևեճին է, այլ ոչ թե թուրք ժողովուրդը: Ամերիկացի միսիոների վկայությամբ. «Թուրքերը պատասխանեցին նույնանման ոգով՝ ասելով, որ իրենք հարկադրված են կովում»:

Այգեստանի ինքնապաշտպաններին հարկավոր էր գրավել կամ ոչնչացնել հակառակորդի մի շարք կարևորագույն դիրքերն ու ամրությունները, որոնց թվում էին անզիական նախկին հյուպատոսարանը և Համուտ աղայի զորանոցը: Առաջինում ամրացնել էին հակառակորդի 70, իսկ երկրորդում՝ 650 զինվոր: Հատկապես առաջնահերթ էր զորանոցի ոչնչացումը, քանի որ այն գերիշխող դիրք ուներ Այգեստան թա-

դամասի վրա: Այդ պատասխանատու գործն իրականացնում են Գևորգ Ճիտեցյանը, Նշան Ժամագործյանը և Բոլղարացի Գրիգորը: Նրանք կարողանում են իրենց հնարած նավթ սրսկող գործիքի օգնությամբ դյուրավառ հեղուկը ցանել հյուպատոսարանի փայտյա մասնի վրա և հրդեհել:

Զորանոցը ոչնչացնելու նպատակով Գր. Բոլղարացին քանքանների՝ ստորգետնուղի փորող վարպետների օգնությամբ հասնում է մինչև զորանոցի հիմքը և տնηաղորում դինամիտ: Սակայն դինամիտի պայթյունը որևէ վնաս չի հասցնում շինությանը: Պայթյունը անհետուանք չի մնում: Զորանոցում հրդեհ է բռնկվում, որը հարկադրում է հակառակորդի գինվորներին լրել այն:

«Երրոսամարտին գործուն մասնակցություն են ունենում նաև երեխաները: Ք. Աշլրի վկայությամբ նրանք կատարում են կապավորի կամ սուրհանդակի դեր՝ Զինվորական մարմնի և դիրքերի միջև: Նրանցից կազմվում են հրշեց և սանհտարական խմբեր: Տղաներից առավել խիզախները վերցնելով նավթով ներծծված լաթերը, զաղտագողի մոտենում էին թուրքերի դիրքերին կամ զբաղեցրած տներին, վառում լաթերը և հրդեհում: Նրանցից մեկը վերադառնալիս վիրավորվում է: Նրան փրկում է մի արիասիրտ աղջկե, որը հակառակորդի չընդհատվող կրակի տակ, տղային հասցնում է յուրայինների մոտ: Իր սխրագործության համար աղջկը պարզևատրվում է «Պատվո խաչ» մեղալով:»



Վանա կղզին և Ս. Խաչ եկեղեցին

Նույն ք. Աշըրի հուշերի համաձայն, Զինվորական մարմինն արգելում է օգտագործել ոգելից խմիչք, հայիոնել թշնամու կրոնը, կրակն հակառակորդի կանանց ու երեխաների վրա: Վկար անգործ մարդ: Միսիոների վկայությամբ. «Ուրախ, հույսերով լի ոգի էր տիրում: Մահացածի հանմար ոչ մի սուզ, ոչ մի սովորական արևելյան լաց ու կոծ...»: Նրանք բարձրացնում էին իրենց գլուխները և ասում. «Ավելի լավ է տաս օր ազատություն և հետո մեռնել, քան մեռնել որպես ստրուկ, ինչպես մենք էինք»:

5-ից 7 տարեկան երեխաները հավաքում էին պատերին դիպած զնդակները, տանում զինազործական արհեստանոց, որտեղ դրանցից նոր զնդակներ էին ծովում:

Տղամարդկանց հետ մարտնչում էին նաև կանայք ու աղջիկները: 19-ամյա Իսկորիի Համբարձումյանը՝ Սլոն, որը առջիկ, հանձն առավ հետախուզելի հակառակորդի կողմից լրված տներից մեկը: Բարեհաջող կատարելով առաջադրանքը՝ Ի. Համբարձումյանը պարզեատրվում է «Պատվիր խաչ» մենդալով:

1915թ. ապրիլի 12-ից 13-ը կատաղի մարտեր են մղվում Այգեստանի բոլոր պաշտպանական տեղամասերում: Թուրքական գրոհները հենտևում են մեկը մյուսին: Հայկական դիրքերը անընդհատ ենթարկվում են ուժակոծությունների: Հայ մարտիկները բոլոր մասերում կարողանում են ետ մենակառորդին:

Գերմանացի սպա Ռ. դե Նոգալեսի հաղորդման համաձայն, թուրքական հրամանատարությունը սկսում է հաճախակի օգտագործել ողորկափող թնդանոթներ: Նրանց արկերը պայթում էին ոչ թե թիրախին դիպչելիս, այլ պատրույզի կրակը վառողին հասնելիս: Թեև օրական արձակվում էր 300-ից 400 արկ, բայց դրանք միշտ չեն, որ պայթում էին: Մի մասի պատրույզը հանգչում էր՝ թաղվելով հողում կամ ընկնելով ջրի մեջ: Բացի այդ, այգեստանցիները սովորել էին դրա դեմ պայքարելու ձևը: Նրանք հաշվարկել էին, որ այդ տեսակի արկերը պայթում են ընկնելուց 15-ից 35 վայրկյան հետո: Դա բավական էր, որ պեսզի բնակիչները, այդ թվում երեխաները, մկրատով կտրենին պատրույզը և այդ կերպ վնասազերծենին ուումքը: Դա հնարավորություն էր ընձեռում ինքնապաշտպաններին լրացնել զինամյթերքի պաշարը:

Ապրիլի 15-ին մի խումբ մարտիկներ, Տիգրան Վարժապետյանի զլյասվորությամբ, հրդեհում են ոստիկանատան շենքը, որտեղ ամրացած զինվորները լուրջ սպառնալիք էին ներկայացնում ինքնապաշտպան-

ների համար: S. Վարժապետյանը պարզեատրվում է մեղալով, և նրան շնորհվում է «Անվնինք հրձիք» պատվավոր տիտղոսը:

Կովի ամենաթե՛ն պահին հայտնվում էր նվազախումբը և իր հայրենասիրական նվազով ոգևորում մարտիկներին: Երաժիշտներից մեկը՝ Խաչատոր Պուճազանյանը, վերհիշում է, որ տարբեր դիրքերից Զինվորական մարմին էին գալիս կապավորներ՝ խնդրելով իրենց մոտ ուղարկել նվազախումբը կամ «ֆանֆառը», ինչպես կոչում էին վանեցիները:

Երգրումից ժամանած թուրքական հետևակը՝ գերմանացի սպայի զլսավորությամբ զիշերային հարձակում է նախաձեռնում: Այն ձախողվում է: Հակառակորդը, մոտ 70 զինվոր կորցնելով, հարկադրված է լինում նահանջել:

Ո. դե՛Նոգալենի վկայությամբ՝ հայ մարտիկների մի շարք հակագրիկներն այն աստիճան են գազագեցնում Զլրեթ թեյին, որ նա հրամայում է իր անձնական ջոկատի հրամանատար Չերքեզ Ահմեդին իր ելուզակների հետ հարձակել մերձակա հայկական զյուղերի վրա: Ահմեդն այնպիսի վայրագություններ է գործում, որ արժանանում է անգամ Զլդեթի «հանդիմանանքին»:

Զնայած մի շարք հաջողություններին, իրադրությունը շարունակում էր մնալ օրիհասական: Զինվորական մարմինը նույնիսկ հրամայում է դարբիններին նիզակներ պատրաստել և բաժանել ժողովրդին՝ թուրքերի հնարավոր ճնորման դեպքում պաշտպանվելու համար:

Այնուամենայնիվ, Այգեստանի հայությունը շարունակում էր մարտնչել՝ ապավինելով միայն սեփական ուժերին: Փ. Թերլեմենզյանը վկայում է. «Այդ կովի պանծալի օրերուն՝ զյուղացին զիշեր թե զերեկ խրամատներ կը փորեր... Կիներ կային, որոնք զնդակներու տակ դիրքեր կերթային՝ քաջալելու և օգնելու համար»:

Թուրքական գրոհները հաջորդում էին մեկը մյուսին: Երբեմն թվում էր, թե այդ ամենին վերջ չի լինելու:

Ք. Աշըրն իր հուշերում նկարագրում է, թե ինչպես 44 հայեր դիմագրավում էին 500 բիթեիսցի քրդերի: Վերջիններիս Զլդեթը հրապուրել էր թալանով, իսկ սեփական շնյալները հավատացընել էին, որ իրենք անխցիկ են «անհավատների» զնդակներից: Եվ նրք քրդերի հարձակման թափից հայերը մի պահ ընկրկում և սկսում են նահանջել, քրդերին թվում է՝ հաղթանակն իրենցն է: Այդ ծանր պահին Արամ Բորոգանջյան անունով մի վիրավոր հայ մարտիկ, ամբողջ հասակով կանգնելով, սկսում է կրակել հարձակվողների վրա՝ գետին տապալելով նրանցից

Վեցին: Տեսնելով հայ մարտիկի արիությունը և համոզվելով, որ իրենք անխցնի չեն, քրդերը սկսում են նահանջնել: Վրա հասած ինքնապաշտպանները կրակ են բացում, և քրդերի նահանջը վեր է ածվում խայտառակ փախուստի, որի ժամանակ նրանք տալիս են 33 սպանված:

Այգեստանի Խաչ փողոցի շրջանը ինքնապաշտպանության հանգուցային կետն էր: Այդ իսկ պատճառով թուրքական գրոհները հիմնականում կենտրոնանում էին այս ուղղությամբ: Թուրքական Հաջի Բերք կոչվող զորանոցից իրենտանին անընդհատ ոմբակոծում էր այս շրջանի դիրքերն ու պաշտպանական ամրությունները: Երբեմն մեկ օրվա ընթացքում հայ մարտիկները հարկադրված էին լինում նոյն դիրքը վերականգնել վեցից յոթ անգամ:

Վանի պաշարմանը մասնակցած գերմանացի սպաներից մենքը, չկարողանալով զսպնի իր հիացմունքը Այգեստանի քաջարի մարտիկների նկատմամբ, բացականչում է. «Ինչ կենաունակ մարդիկ են սա հայերը, մենք քանդելով, անոնք շինելով չկրցանք իրենց հասնել, անկարենի է, որ մենք դեմ կովողները սիվիլներ ըլլան»:

Ապրիլի 16-ին թուրքական գրոհներն ավելի մեծ թափ ստացան: Հակառակորդն իր նորացրած շարքերը համալրում է նոր ուժերով: Միաժամանակ Բիթլիսից (Բաղնշ) բերվեցին թնդանոթներ և ռազմամթերք: Լրացնելով ռազմաթերքի պաշարը՝ հակառակորդը դիմում է լայնածավալ գրոհների:

Թուրքերի հարձակման հիմնական թիրախը դարձավ Սահակ քենաչովող դիրքը: Նրա վրա է կենտրոնացվում չորս թնդանոթի կրակ: Հրետակոծությանը հետևում են հակառակորդի գրոհները: Մոտ մեկ տասնյակի հասնող ինքնապաշտպանները, ծանր մարտեր մղելով, կարողանում են հետ շարտել թուրքերին:

Ապրիլի 17-ին կատաղի մարտեր են մղվում Սահակ քեն և Թովմազյան դիրքերի դեմ: Վաղ առավոտից ակսած՝ թուրքերն անընդմեջ ուժքակոծում էին և երեք ժամվա ընթացքում դրանք փլատակների վերածնցին: Հակառակորդը մի քանի անգամ գրոհներ է ձեռնարկում, սակայն ինքնապաշտպանների արիությունն ու նշանառու կրակը, և հատկապես ինքնաշեն նոնակները, խուճապի են մատնում թուրք-քրդական ուժերին, որոնք շտապում են նահանջել:

Հայերը երբեմն իրենք են դիմում հանդուգն գրոհների՝ նպատակ ունենալով ոչնչացնել կամ գրավել հակառակորդի կարսորագույն դիրքերը: Երբեմն դա հաջողվում է կատարել զգալի գոհերի գնով: Այսպես՝

Քյոմուր Վարդանի խումբը, նման գործողություն կատարելիս, տալիս է յոթ սպանված և ութ վիրավոր:

Ապրիլի 23-ին, օգտվելով հակառակորդի անհոգությունից, ինքնապաշտպանները հարձակվելու և հրդեհում են նրա նրկու դիրքերը: Զադեթը թաղամասում, պարենի ճզնաժամը սաստկացնելու նպատակով, Այգեստան է ուղարկում մեծ թվով կանանց ու երեխաների: Նրանց թիվն այնքան է ավելանում, որ Այգեստանին սպառնում է սովորական-գր: Թաղամասում մնացել էր յոթից ութ օրվա պարենի պաշար:

Ամեն անգամ, երբ թուրքական որևէ ձեռնարկում ձախողփում էր, կամ հայերն իրենց գործողություններով վնաս էին հասցնում, Զադեթը հրամայում էր ուժեղացնել թաղամասի ումարությունը: Միայն մեկ օրվա ընթացքում հրետակոծության հետևանքով զոհվում և վիրավորվում են 40 կին և երեխա:

Ապրիլի 29-ից 30-ը համեմատաբար խաղաղ է անցնում: Դիրքերից տեղեկացնում են, որ քաղաքացիական բնակչությունը գույքով և ընտանի կենարանիներով հեռանում է քաղաքից: Միաժամանակ հայտնում են, որ հակառակորդի դիրքերում թիւ թվով զինվորներ են մնացել: Այդ ամենը վկայում էր, որ ռուսական բանակը մոտենում է Վանին, և հակառակորդը շտապում է օր առաջ հեռանալ Վանից:

Մայիսի 1-ին պատահական գնդակից զոհվում է թուրքերի դեմ մդ-



Վան՝ Թաղաքամեջի զինվորական խորհուրդը

ված մարտերում բազմիցս աչքի ընկած ասորի կաշան: Նա Շ. Հակոբյանի գինակիցն էր: Զինվորական մարմնի հրամանով, զինվորական պատվով կաշան թաղվում է Նորաշենի գերեզմանոցում:

Մայիսի 3-ին թուրքական հրետակոծության հետևանքով վնասվում են նաև ամերիկյան միսիոներական հաստատությունները: ԱՄՆ-ի քաղաքացիներին պատկանող շենքները ոմբակոծվում են Զևդեթ քեյի հրամանով:

Նույն օրը երեկոյան մարտիկները Այզեստանից հարձակում են գործում հակառակորդի դիրքերի ուղղությամբ, և դրանք գտնում դատարկ: Հրդեհվում են Թոփրակ կալե և Հաջի Բերր գորանոցները: Միաժամանակ ինքնապաշտպանները շտապում են քաղաքային բանտ, հույս ունենալով, որ այստեղ ողջ կզտնեն իրենց համարադրացիներին: Սակայն, Զևդեթ քեյի հրամանով սպանվել էին բոլոր կալանավորները, որոնց թվում Ս. Դ. Հնչակյան կուսակցության Վանի կենտրոնական կոմիտեի անդամների մեծ մասը:

## Քաղաքամեջի ինքնապաշտպանությունը

Ապրիլի 4-ին՝ կեսօրից հետո ընդհատվում են Այգեստանի բոլոր հարաբերությունները Քաղաքամեջի հետ: Դա հարկադրում է թաղամասի հայությանը դիմել նախազգուշական քայլերի: Կազմվում է Զինվորական մարմին: Նրա անդամներն էին՝ Լևոն Գալճյանը, Միհրան Թորոմանյանը, Միհրդատ Միրզախանյանը, Սարգիս Շահինյանը, Դավիթ Սարգսյանը, Հայկակ Կոսոյանը (դեկափար) և Հարություն (Հարո) Ներկարարյանը (բոլորն եւ ՀՅԴ անդամներ):

Զինվորական մարմնի աշխատանքներին մասնակցում էին նաև Եղնիկ վարդապետ Ներկարարյանը և Միրզախան Միրզախանյանը: Հաջող ինքնապաշտպանություն ապահովելու համար ստեղծվում են մի շարք ծառայություններ՝ զինական՝ զենքն ու զինամթերքը հաշվառող, զինման աշխատանքներ իրականացնող, զենք կրելու ընդունակ տղամարդկանց հաշվառող, զինագործական, վիրաբուժական և այլն:

Քաղաքամեջի հայությունն ուներ 101 տարբեր սիստեմի մարտական և 120 որսորդական հրացաններ, 90 «Մատուցեր» և 120 այլ սիստեմի ատրճանակներ: Մարտերի ընթացքում հակառակորդից խլվեց և լիքրավորվեց 12 հազարից ավելի փամփուշտ: Կային 16 ինքնաշեն ռումբեր: Սեներեիմ Շալճյանի վկայությամբ միայն չորսից հինգ տղամարդ էր, որոնք վարժ տիրապետում էր զենքին: Մնացածններին հարկավոր էր շտապ ուսուցանել զենքի օգտագործման ձևերը:

Քաղաքամեջը բաժանվում է պաշտպանական չորս շրջաններ՝ 25 դիրքերով: Ինքնապաշտպանությունը սկսվում է ապրիլի 7-ին, ժամը՝ 14-ին: Հակառակորդի հարձակումը ետք է մղվում: Հարություն Ներկարարյանի զլսավորությամբ հայերին հաջողվում է գրավել Թեքալիֆի Հարպիյն կոչվող նրկհարկանի տունը:

Թաղամասի արևմտյան շրջանը անընդհատ ենթարկվում է չերքեցական ստվարաթիվ ջոկատի հարձակմանը: Նրանց օժանդակում է հրետանին: Հինգ ժամ տևած կատաղի մարտերից հետո, չհասնելով ոչ մի արդյունքի, թշնամին նահանջում է:

Մարտի ժամանակ վիրավորված Ավետիս Վարպետյանը շի զանկանում լրել մարտադաշտը, քաջ զիտակցելով, որ յուրաքանչյուր հրացան և մարտիկ կարող են վճռորոշ լինել: Նա խնդրում է մարտական ընկերներին. «Այս, մի առնիք հրացանս, բարձրացուցնք ինձ, կրակել կուզնիմ»:

Ահազին օրվա կոիվների ընթացքում հակառակորդն ունենում է 60-70 սպանված և մոտ 80 վիրավոր:

Զինվորական մարմնի որոշմամբ ոչնչացվում են հակառակորդի կողմից ամրացված մի քանի շինություններ՝ դատարանի շենքը, Թնրիգրաշյան խանը, ոստիկանատունը և Թնբալիքի Հրապիեյի ամբարը: Հ. Կոսոյանը վկայում է. «Սույն հաջողությունները բարձրացրին ժողովրդի տրամադրությունը, կովողներու կորովը: Թշնամին մեկ գիշերվա մեջ զրկվեց իր էն ուժնեղագույն դիրքերն, որոնք սպառնալիք էին և կը թվին անխորտակելի, հետ շպրտված էր, և ստեղծված կրակն զիծ մեր և թշնամու միջև»:

Զինվորական մարմինը հանձնարարում է Հ. Ներկարարյանին ոչնչացնել մի շարք ուսումնական նշանակություն ունեցող շինություններ՝ Քաղաքամենջի ոստիկանատունը, դատարանի շենքը և Փիրումյան խանը: Այստեղ տեղակայված հակառակորդի զինվորները լուրջ վտանգ էին ներկայացնում ինքնապաշտպանների համար: Մեծագույն դժվարությամբ ինքնապաշտպանները կարողանում են կատարել հանձնարարությունը:

Ապրիլի 8-ից 9-ը հակառակորդը ճենարկում է միաժամանակյա հարձակումներ տարբեր ուղղություններով: Դրանով նա ցանկանում էր շփոթմունքի մեջ զցել հայերին և գտնել պաշտպանության առավել խոցելի տեղամասը: Հարձակումներն ուղեկցվում են անընդհատ հրետակոծությամբ: Ի պատճենան թուրքերի, հայերն իրենք են հարձակում նախաձեռնում և հակառակորդին դուրս մղում փոստատան շենքից:

Թուրքական անընդհատ գրոհները և հատկապես խիստ հրետակոծությունը խումագ են առաջացնում բնակչության շրջանում, որոնք սարսափահար վագում է առաջնորդարան՝ հուսալով այնտեղ փրկություն գտնել: Զինվորական մարմնի անդամները շտապում են հանգստացնել բնակչությանը՝ հորդորելով հանգիստ մնալ և խումագի շմատնվել: Պաշտոնապես հավաստիացվում է. «Մենք մեր ուժով և միջոցներով մեկ ամիս և ավել կատահենք քաղաքը: Այդ մասին մի տարակուսեք: Չեզմե կը պահանջենք միայն աշխատանքով օգնե՛ք մեզ: Ով կարող է չնշին գործ մը կատարել, թող անով աջակցե՞: Թող չսպասե ձեռքը ծալած: Արձանագրվեցնե՛ք և անցե՛ք դիրքերու ամրացման գործին»:

Ապրիլի 10-ի գիշերը Զինվորական մարմինը նախաձեռնում է թուրքական զինապահեստի ոչնչացումը: Դա բավականին դժվար լսնդիր

Էր, քանի որ անհրաժեշտ էր անցնել մոտ հարյուր մետր բաց տարածք, որը զնդակոծվում էր հակառակորդի կողմից: Արամ Կապարուկյան անունով մի երիտասարդի հաջողվում է թուրքերի համար աննկատ մոտենալ զինապահենստին, նրա փայտյա մասնը գողել նավթով և հրդեհել ու անվնաս վնրադառնալ: Թուրք զինվորները չկարողանալով մարել հրդեհը՝ հարկադրված են լինում լքել շինությունը: Վ. Կոսոյանի վկայությամբ. «Խազնող հրացաններու որոտին նկան խառնվելու զինապահենստի փամփուշտներու պայթումները, որոնք ամբողջ շենքը վլատակի վնրածնցին»:

Մի քանի օրերի մարտերի ընթացքում ինքնապաշտպանները որոշակի մարտական փորձ են ձնոք բերում և արդեն առանց խուճապի են են մդրում թուրքական կանոնավոր բանակի գրոհները: Կարտրն այն էր, որ մարտիկները հավաստ են ձնոք ընդում սեփական ուժերի և հնարավիրությունների հանդեպ: Քաղաքամեջի հայությունը կարողանում է հայթահարել հոգեբանական արգելվները, հավատալ իր ուժերին ու հնարավիրություններին: Ժողովուրդը գիտակցում է, որ իր փրկությունն իր իսկ ձնշերում է, որ այժմ ինքն է տնօրինում իր բախտը: Այդ իսկ պատճառով համախմբվում և լարում է իր ուժերը:

Ապրիլի 13-ից 16-ը թուրքական հարձակումների թափոր զգալիորեն թուլանում է: Հակառակորդը մերժընդմեր այստեղ կամ այնտեղ անկազմակերպ գրոհներ է սկսում: Միայն թուրքական հրետանին է, որ կանոնավոր ռմբակոծում է Այգեստանը: Օրական արձակվում է 200-ից 300 արկ:

Ապրիլի 17-ից մինչև 21-ը թուրքերը անընդհատ հարձակումներ են գործում հայկական դիրքերի վրա: Հրետանին օրական արձակում է մինչև 500 արկ: Բազմաթիվ շինություններ, որոնց երկրորդ հարկերն օգտագործվում էին իբրև կրակակետեր, ամբողջովին ոչնչացվում են հրետանային կրակով: Քանի որ ցերեկը հրետակոծությունը և հրածգությունը անընդհատ էր և հնարավիրություն չկար արագ վերականգնելու վնասված դիրքերը, այդ աշխատանքները հիմնականում իրականացվում էին զիշերները, այն հաշվարկով, որ առավելագույն դրանք պատրաստ լինեն դիմագրավելու հակառակորդին:

Ապրիլի 21-ի երեկոյան Զևսերթ երկու քանազնացների միջոցով հայերին առաջարկում է հանձնվել: Ո. դե Նոզալեսի խոստովանությամբ, նահանգապետի նպատակն էր հայերին խաբենությամբ դուրս բերել քաղաքից և ոչնչացնել: Հայերը մերժում են անձնատուր լինելու առաջարկությունը:

Ապրիլի 24-ից 25-ը հակառակորդի հարձակման թափը հասնում է զագաթանակներին: Մարտերը մղվում են նոյնիսկ զիշերները: Խստանում է հրետակոծությունը, որի հետևանքով վնասվում են Քաղաքամեջի գրեթե բոլոր տները, ինչպես նաև սուրբ Նշան, Պողոս և Տիրամայր Եկեղեցիները: Փլվում է բողոքականների աղոթատունը, ավերակ են դառնում Հյուսիսյան, Շուշանյան վարժարանները և մանկապարտեզի շենքը:

Ապրիլի 25-ից 26-ը Զևդեթի հրամանով Քաղաքամեջ են քշում Վանի շրջակա գյուղերի ողջ մնացած հայ կանանց ու երեխաներին՝ նպատակ ունենալով ուժեղացնել սննդամթերքի ճգնաժամը:

Ապրիլի 27-ին հակառակորդը սկսում է տեղափոխել հիվանդանոցի գույքն ու հիվանդներին: Մայիսի 3-ին թուրքերի կրակը մեղմանում է և երեկոյան ժամը 22-ին՝ դադարում: Մայիսի 4-ի առավոտյան տեղի է ունենում երկու թարամասնի քնակիշների հանդիպումը: Փ. Թերլեմեզյանը, ողջունելով համարադարձիներին, ասում է. «Ողջոյն քաղաքացի հերոս ժողովրդին, պարծանք բոլոր կռվողներուն, որոնք խիզախորն կուրծք տվեցին թշնամուն և հաղթանակեցին: Երկու տեղերում ալ փառով հաղթանակեցինք, թշնամին անզոր ու խայտառակված փախավ»:

Հրզրումի փոխականությունը Է. Շոյբեր-Ռիխտերի տվյալներով թուրքերի կորուստները կազմել են 1000, իսկ հայերինը՝ 300 սպանված: Թուրքական կորուստների թվում հաշվի չեն առնված քրդական անկանոն ջոկատները, որոնք օգտագործվում էին որպես «թնդանոթի միս»:



**Թուրքերից գրավված թնդանոք**

Ա. Եկարյանի տվյալներով հայերն ունեցել են 250 սպանված, որոնցից 145-ը մարտիկ, մնացածը՝ քաղաքացիներ: Քաղաքամեջի կորուստը կազմել է 34 սպանված, որոնցից 12-ը մարտիկ, իսկ մնացածը՝ խահաղ բնակիչներ: Ունեն 59 վիրավոր, որոնցից 16-ը մարտիկ, մնացածը՝ բնակչության թվից: Պաշարման ընթացքում Այզեստանի և Քաղաքամեջի վրա արձակվել է 16 հազարից ավելի արև:

1915 թ. մայիսի 5-ի երեսկդյան Խնչոյի հեծելավաշտը հասնում է Վան: Մայիսի 6-ին, առավելագույն ժամը 6-ին, քաղաք են մտնում II, իսկ ժամը 12-ին՝ IV կամավորական ջոկատները, ապա Բայազետի ջոկատի հիմնական ուժերը: Վանեցիներն ազատարարներին ջերմ ընդունելություն են ցույց տալիս: Կամավորական Ս. Չենտիկյանը վկայում է. «Վանի ժողովուրդը երկշարք կանգնած, ծաղիկներով, ուրախ «կեցցն» բացականչություններով մեզ դիմավորեցին ...»:

Արարատյան զնդի հրամանատար Վարդանն (Սարգիս Մեհրաբյան) իր հուշերում խոսուովանում է, որ այդ պահին ինքն աննկարազելի հրճվանք ապրեց: Նա վկայում է. «Երբ քաղաքի պաշտպան զինվորների միջից անցնում էինք, ես երեսայի պես արտավեցի, չկարողացա ոչ մի ուրախության խոսք ասել և միայն, երբ մի քիչ հեռացա, կրսոյա Համբարձումյանին հետ ուղարկեցի զինվորներին հայտնելու իմ անսահման ուրախությունը և շնորհակալությունը, որ վերջապես ժողովրդին փրկված գտանք: Լյանքիս մեջ ես ինձ այդ օրը երջանիկ համարեցի»:

Վանի ինքնապաշտպանության մասնակից Աքեն Սարգսյանը վկայում է. «Կայծակի արագությամբ լուր տարածվեց, որ ուսի բանակը, կազակները, հայերի կամավորները գալիս են: Մի տեսնեիք ի՞նչ ուրախություն բարձրացավ, ժողովուրդը հրճվանքի մեջ էր»:

Վարդանը հետևյալն է հիշում. «Երբ քաղաք էինք մտնում, Արամը ձի նստած մեզ դիմավորելու նկավ: Հենց ձիու վրա զրկախառնվեցինք, ես նոցա առաջուց գիտեի և ճանաչում էի»:

Նիկոլ Աղբալյանը հետևյալ կերպ է արժեվորում Վանի հերոսամարտը. «Վանի ինքնապաշտպանությունը մեր նորագույն պատմության փառավոր դրվագներից մեկն է անշուշտ: Վանեցիներն այդ գործով փառք վաստակեցին և հանձնեցին հայոց պատմությանը, որ կը մնա անկորուստ, որչափ հայն ապրի:

Վանեցիք բախտավոր եղան. նրանք ունեցան անձնուրաց մարդը - Արամը, որի շորջը համալսմբվեցան ժողովուրդի անձնվեր տարրերը և իրենց օրինակով վարակեցին ամենքին»:


Վանի ինքնապաշտպանությունը բարձր գնահատեց Գարեգին Նժեկիր. «Արամն ու Վանը եկան վկայելու աշխարհին, թե, այո՛, հայությունը կարելի է ջարդել, երբ ան անզեն է, անհամերաշխ ու անդեկավար, բայց ո՞չ պարտության մատնել, ո՞չ ալ կասեցնել ընթացքը հայ արիության, երբ ան կը դեկավարվի Յեղի Ոգիեն...Վանի հերոսամարտ: Ճակատամարտ մը, սեփական ուժերով տարված փառահեղ հաղթանակ մը, որ հայության վերածնության համար ավելի մեծ դեր կատարեց, քան կրնային կատարել հայ դպրոցն ու զրիշը՝ նրկու տասնամյակ տարիներու ընթացքին»:

Վանի հայ քնակչության համառ և անզիջում մարտերը գնահատել է հակառակորդը՝ Ռ. դե Նոգալեսը: Նա հետևյալ խոստովանությունն է արել իր հուշերում. «Ես հազվադեմ եմ հանդիպել կամ ենթադրել, թե նրբելիցն կրկին կտնանեմ այնպիսի կատաղի կրիվ, ինչպիսին ես ականատես եղա Վանի պաշարման ժամանակ»:

## Վանի ժամանակավոր նահանգապետության կազմավորումն ու գործունեությունը

Ուստական կովկասյան իշխանությունների և հրամանատարության առջև դրված էր Օսմանյան կայսրությունից նվաճված տարածքների կառավարման խնդիրը: Այն հրատապ դարձավ Վանի անսպասելի ազատագրումից հետո:

Մայիսի 7-ին ուստական հրամանատարությունը Վանի և ազատագրված շրջանների ժամանակավոր կառավարիչ (նահանգապետ) է նշանակում հայ ազգային ազատագրական շարժման ականավոր գործիչ, Այգեստանի ինքնապաշտպանության ղեկավար Արտամ Մանուկյանին:



**Արտամ Մանուկյան**

Ամերիկացի միսիոներ Փ. Աշլը նշում է, որ առաջին անգամ, 700 տարիների ընթացքում, հայերը հնարավորություն են ստանում ինքնուրույն կառավարելու:

Մայիսի 8-ին կազմակերպվում են ազատագրված գավառների և Վան քաղաքի կառավարման մարմինները՝ նահանգային խորհուրդը և վարչությունը, կրթական և ոստիկանական տեսչությունները, քաղաքապետարանը, գավառային վարչությունը, դատարանը և այլն:

Ա. Մանուկյանը, լինելով ՀՅԴ անդամ, պաշտոնների նշանակելիս ղեկավարվում էր ապակուսակցական սկզբունքով: Նրա համար առաջնահերթ տվյալ անձի ոչ թե կուսակցական պատկանելությունն էր, այլ տվյալ աշխատանքը կատարելու կարողությունը:

Իշխանության մարմիններում ընդգրկվում են բացառապես հայեր, Վանի մտավորականության լավագույն ներկայացուցիչները, անկախ կուսակցական պատկանելությունից և սոցիալական ծագումից: Նշված մարմիններում պաշտոնավարելու համար հրավիրվում են վարչական աշխատանքի փորձ և հմտություն ունեցող ուստահպատակ հայեր: Նրանց թվում էին Սիրական Տիգրանյանը (Գոլսնահանգապետ), Պարույր Լևոնյանը (նահանգապետի օգնական, աշուղ Զիվանու

որդին), Համագասպ Օհանջանյանը և ուրիշներ: Հայ հասարակությունը շտապում էր արագ վերականգնել Վանի և նահանգի քայլայված տնտեսությունը: Փաստորեն ապագա հայկական պետականության հիմք էր դրվում:

Քաղաքը և ազատագրված զավառներն աստիճանաբար բնակչանուն հունի մեջ են մտնում: Արևելահայ զանազան հասարակական-քարեզմական կազմակերպություններ, հատկապես ՀՅ Դաշնակցությունը և Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ 5-րդը, սկսում են կազմակերպել անհրաժեշտ օգնության առարումը Վան: Նահանգային խորհուրդը մշակում է զանազան ծրագրեր ոչ միայն նահանգի տնտեսությունը մերականգնելու, այլև զարգացնելու ուղղությամբ: Վանի նահանգը բաժանվում է 4 զավառների և 12 զավառակների: Նշանակվում են զավառապետներ, սահմանվում է պաշտոնայանների թիվը: Ներքին կարգ ու կանոնը պահպանելու, զավառներ վերադարձող հայ և ատրի բնակչությանը բրդերից պաշտպանելու նպատակով ստեղծվում է ոստիկանական ծառայություն: Ոստիկանությունը լինելու էր այն հենքը, որի վրա պետք է կազմավորվենին զինված ուժերը: Սակայն նահանգի ավերված վիճակը հնարավորություն չտվեց ավելացնել ոստիկանության աշխատակիցների թիվը: Տղամարդիկ առաջին հերթին անհրաժեշտ էին զյուղատնտեսական աշխատանքներ կատարելու համար: Այդ իսկ պատճառով բնակչությանը տրվում են զենք կրելու արտոնագրեն՝ հայերեն և ռուսերեն լեզուներով: Դա հնարավորություն է տալիս կազմել տեղական ինքնապաշտպանական խմբեր, որը ոստիկանության հետ միասին ոչ միայն հետ էր մղում քրդական զանազան ավագակալամբերին, այլև հաճախ ինքն էր նախաձեռնում կաճխարգելիչ գործողություններ, հարկադրելով քրդերին հետու մնալ ոչ միայն իրենց բնակավայրերից, այլև մշակելի հողերից ու արտօսվայրերից: Ինչպես նշում է Գր. Օհանջանյանը. «Վասպուրականցին անփոխարինելի է իր տոկունության մեջ, միայն հարկավոր է օգտվել նրա ուժերից, ծառագյեններ նրա այդ հատկությունը հենց իր օգտին»:

Կ. Սասունու բնորոշմամբ. «Վանը, լոնլյայն, բոլորի մտքի մէջ կը դառնայ հայոց առաջին մայրաքաղաքը, ուր կայ հայ իշխանութիւն, հայ բանակ, հայ վարչական կազմ: Հայոց անկախութեան առաջին ծառագյեն է այս (ընդգծումն հեղինակինն է-Ռ.Ա.)»:

Նահանգապետարանն ընդունեց ութ ամսվա՝ մայիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընդգրկող բյուջեն: Դա իհարկե բավականին քիչ էր,

սակայն առկա վիճակում միայն այդքանն էր հնարավոր ապահովել: Նահանգային իշխանություններն այնքան իմաստուն և հեռատես եղան, որ անմիջապես չփոխեցին օրենքները: Նրանք հասկանում էին, որ բնակչությունը քիչ թե՛ շատ տեղյակ է թուրքական օրենքներին և դրանց կտրուկ փոփոխությունը կարող է հանգեցնել խաղնաշփոթի, ուստի որոշվեց ժամանակավորապես առաջնորդվել թուրքական օրենքներով:

Իշխանությունների առաջնահենքը խնդիրներից էր երկրագործական աշխատանքների շտափ վերսկումը, որովհետև 1915թ. ապրիլից մինչև մայիսի կեսերը դրանք դադարեցվել էին հայերի զանգվածային կոռորածների հետևանքով: Կովկասում պատվիրվեցին 3 հազար տուբու արժողությամբ հնձող և կալսող մեքենաներ: Ա. Մանուկյանի նախաձեռնությամբ, տուժած բնակչության համար հանգանակվեց հազար փուլք գորեն, ութից տաս հազար ոչխար, ավելի քան երկու հազար գլուխ խոշոր եղանակով անասուն: Նահանգապետի հատուկ հրահանգով գավառապետներին հանձնարարվեց հետաքրմնել և փաստագրել թուրք և բուրդ հրոսակների կատարած բարբարոսությունները:

Արարատյան գնդի հրամանատար Վարդանի վկայությամբ. «Լինելով Վանի նահանգապետ, նորա (Արամի – խմբ.) պարտավորությունների մեջ էր մտնում և այն, որ նա պետք է մտածեր և ամեն տեսակ օգնություն գույց տար տուսական գորքին, նոցա համար հաց հայթայթեր...ճանապարհների կարգավորության մասին հոգ տաներ...: Եվ նա ամենայն հոգատարությամբ անում էր»:

Բացի հայ, ասորի և եղդի բնակչության առօրյա հոգսերից, Վասպուրականի իշխանությունները հոգում էին յուրայինների կողմից լրկած թուրք և բուրդ կանանց ու երեխաների մասին:

Վանի ժամանակավոր նահանգապետության ստեղծումից հետո, հայ բնակչությունը որևէ բռնություն չգործադրեց քաղաքում մնացած թուրք համարադարձիների նկատմամբ: Ավելին, նրանց վերադարձվեց իրենց ունեցվածքը: Վանի ամերիկյան և գերմանական միսիոներական հաստատություններում բնակության տեղի սահմանափակ լինելու պատճառով թուրք կանայք և երեխաները տեղափորվեցին հայերի տներում: Քաղաքի ռատիկանապետ Վահան Փափազյանին հանձնարարվեց թուրք համարադարձիներին ապահովել համապատասխան քանակությամբ հացով: Թուրք կանանց ու երեխաների հովանավորությունը ստանձնում է ուս նշանավոր գրող Լև Տոլստոյի

դուստրը՝ Ալեքսանդրան:

Բայազետի ջոկատի հրամանատարի կարգադրությամբ ազատ են արձակվում քուրդ պատանդները: Գեներալ Ա. Մ. Նիկոլաևը հանձնարարում է Արամին ապահովել քրդերի անվտանգությունն ու վերադարձն իրենց բնակավայրեր: Այնինչ այդ քրդերի թփում էին հայերի և ատրիների շարդերի ու գույրի թալանի մասնակիցները:

Ա. Մանուկյանը պաշտոնապես դիմում է ուսական հրամանատարությանը՝ խնդրելով բեկանել հրամանը: Նահանգապետն ընդգծում է, որ քրդերին թույլատրենով բնակվել թիկունքում, ուսները վտանգում են Վան-Ջուլֆա և Վան-Իգրի ռազմավարական նշանակություն ունեցող ճանապարհները: Այնուամենայնիվ, նա ստիպված էր ենթարկվել:

Հայաստանի ազգային արխիվում պահպանվել է ամերիկյան միսիոներներ Ք. Աշորի և Է. Յարոնի նամակը՝ ուղղված Ա. Մանուկյանին: Նրանք խնդրում են տրամադրել օրական հինգ ոչխար՝ իրենց մոտ գտնվող թուրք և քուրդ կանանց ու երեխաներին սննդով ապահովելու համար:

Յավոր ուսական քարձրագույն իշխանությունների վերաբերմունքը Վանի հայկական նահանգապետության նկատմամբ անքայլացկամ էր, քանի որ քաջառապես հայերից կազմված նահանգապետությունն ապագայում հայկական պետականության հնարավոր սաղմը կարող էր դառնալ: Ուստի, ուսական իշխանությունները, քրդերի նկատմամբ հովանավորչական քաղաքականություն վարելով, փորձում էին հայերին հակակշիր ստեղծել:

Մեծապետական և միապետական ծայրահեռ հայացքներ ունեցող ուս քաղաքական և պետական գործիչների մի մասի մոտ նոյնիսկ տագնապ էր առաջացնում կովկասյան բանակի մարտական հաջողությունները: Ուստատանի նախարարների խորհրդի նախագահ Ի. Գորենիկինի համոզմամբ. «Հայաստանի ստեղծումը ետպատճարագմյան շրջանում կարող է տարբեր քարդությունների աղբյուր հանդիսանալ»: Ուստի, պատահական չէ, որ ուսական կառավարությունը նախատեսում էր Արևմտյան Հայաստանը գաղութացնել ուս վերաբնակիչների միջոցով:

Վանի հայկական իշխանությանը վիճակված չէր շարունակել իր գործունեությունը: Հուլիսի 11-ին սկսում է 4-րդ բանակային կորպուսի գորամասերի նահանջը: Դա պատճառաբանվում է օսմանյան գերակշիր ուժերի լայնածավալ հարձակումով: Արարատյան գնդի հրամա-

նատար Վարդանն այցելում է Բայազետի ջոկատի հրամանատար, գեներալ Ա. Մ. Նիկոլաևին՝ պարզաբանելու նահանջի հետ կապված լուրերը: Գեներալը հաստատում է նահանջի հրամանը և մերժում հայ կամավորներին հրետանի և ռադիոկայան տրամադրելու Վարդանի խնդրանքը, որպեսզի բնակչությունը և կամավորները կարողանային պաշտպանել Վանը:

Հուլիսի 14-ին Ա. Մանուկյանը դիմում է գեներալ Ա. Մ. Նիկոլաևին՝ խնդրելով քաղաքի պաշտպանության համար թողնել որոշակի քանակությամբ զենք, զինամթերք և հրետանի: Գեներալը հավաստիացնում է նահանգապետին, որ ռուսական բանակը մտադրություն չունի նահանջել Վանից: Նա, սակայն, խորհուրդ է տալիս Արամին՝ կանանց ու երեխաներին տեղափոխել Կովկաս:

Արամի քաղաքի պաշտպանությունը կազմակերպելու ջանքերն ապարդյուն անցան: Խուճապը համակեն էր բոլորին: Հայ բնակչության նահանջի ապահովումն իրականացնում էին հիմնականում հայ կամավորները և ռուսական որոշ զորամասեր: Հուլիսի 18-ից 24-ը Վաճան ամբողջությամբ դատարկվեց: Հայ զաղթականները հատկապես ծանր կորուստներ ունեցան հուլիսի 24-ից 25-ը՝ Բնիքը հորում: Զրդական իրուսակախմբերը հարձակվեցին անպաշտպան և անկազմակերպ զաղթականների վրա: Սպանվեցին 10 հազարից ավելի հայեր:

XVIII դարում Սյունիքում և Արցախում հայկական պետականության վերականգնման փորձից հետո, Վանի ապրիլ-մայիսյան և Վասպուրականի նահանգապետության փորձն ապարդյուն չանցավ: Այն օգտագործվեց Ա. Մանուկյանի կողմից, երբ նա 1917թ. վերջին Երևանի հայոց ազգային խորհրդի փաստացի դեկավարն էր, 1918թ. մայիսին Սարդարապատի հերոսամարտի գլուխվոր կազմակերպիչն ու ոգեշնչողը, իսկ նույն թվականի հուլիսի 24-ից՝ Հայաստանի հանրապետության ներքին գործերի առաջին նախարարը:

## Դիմադրական մարտերը Մուշ-Սասունում և Շապին-Գարահիսարում

1915թ. գարնանը սկսվում է Տարոնի հայ բնակչության մասնակի կոտորածք, որը զնալով ահազնանում է: Դաժանություններով հատկապնու աչքի են ընկնում Մուսա թեյր և շեյխ Հազրաթը:

Վանում անհաջողության մատնվելուց հետո՝ Երիտթուրքական իշխանությունները գործում էին չափազանց զգույշ: Նրանք զբաղված էին ռուսական բանակի առաջխաղացումը կասեցնելով և չեն շտապում իրականացնել Տարոնի հայության ջարդը: Երիտթուրքերը զիտելին, որ քրդական անկանոն ստորաբաժանումներն առանց օսմանյան կանոնավոր գորամասերի և հրետանու աջակցության, ի զորու չեն կոտրել հայերի դիմադրությունը: Իշխանությունների գնահատմամբ, տարոնցիններն ունեն երկու հազար մարտիկ: Իրականում ինքնապաշտպանների ուժներն անհամենա թիշ էին:

Մուշում և շրջակայքում ստեղծված սպառնալից վիճակը և քրդերի կասկածների ակտիվությունը չեն կարող չափանկատացնել հայությանը: Հունիսի կեսերին Մուշում հրավիրվում է ներկայացուցչական ժողով: Մասնակիցները չեն կարողանում համաձայնության գալ, թե եր և որտեղ պետք է սկսել զինված ելույթը: Ռ. Տեր-Մինասյանի կարծիքով դիմադրության հիմնական կենտրոնը պետք է լիներ Սասունը, ուր պետք է կենտրոնացվեն Մուշի և դաշտի զինված ուժները: Փաստորեն, Մուշն իր շրջակա հայկական զյուղերով մատնվում էր բախտի քմահաճույքին:

Սասուն բարձրացած ուժները մեկ ամիս շարունակ չնախաձեռնեցին որևէ նախապատրաստական գործողություն:

Հուլիսին ռուսական բանակի առաջխաղացման դադարեցումը հնարավորություն տվեց Երիտթուրքական իշխանություններին զգալի ուժներ կենտրոնացնել և իրականացնել հայերի կոտորածքը:

Առաջին հարվածը հասցվեց Մուշ քաղաքի հայկական թաղամասներին և դաշտի հայկական զյուղերին: 1915թ. հունիսի 26-ին Մուշի կառավարիչ Մերվելը հրամայում է քաղաքի հայությանը գաղթել, չենթարկվելու դեպքում է դաժան հաշվնիարդար տեսնել:

Հունիսի 27-ին Մերվելը իր մոտ է հրավիրում Մշշ առաջնորդական տեղապահ Վարդան Վարդապետին և հայտնում, որ քաղաքի հայության տարագրման համար տրվում է երկու ժամանակաշրջան՝ Հանդիպմանը ներկա էին Մուշ քաղաքից Օսմանյան խորհրդարանի պատգամավոր

Խոջա Իլիասը և Վանի ժանդարմական գումարտակի հրամանատար Քյազիմ բեյը: Նրանք Վարդան Վարդապետին հավաստիացնում են, որ տարագրության ընթացքում կձեռնարկվեն բոլոր միջոցները հայերի անփառագությունն ապահովելու համար:

Ստանալով նման «հավաստիացումներ»՝ Վարդան Վարդապետն առաջնորդարանում ժողով է գումարում, ինքնապաշտպանության կողմնակիցներից պահանջում է չդիմադրել և ենթարկվել իշխանությունների հրամանին: Նրա առաջարկը, սակայն, հանդիպում է Հաջի Հակոբ Կոտոյանի, Տիգրան Մկրտչյանի, Դերձակ Ավոյի, Լևոն Ապահանի և այլոց մերժումին: Նրանք վճռում են չենթարկվել իշխանությունների հրամանին և դիմադրել:

Հայկական թաղամասն ամուր օդակվում են օսմանյան զորքերով, թուրքական և քրդական զինված ստորաբաժանումներով: Բերքում են լրացուցիչ 11 թնդանոթ և երկու հազար զինվոր: Հունիսի 28-ին սկսվում է Մուշի հայության ինքնապաշտպանությունը: Հքնտանին անընդմեջ իրենտակոծության է ենթարկում հայկական հինգ թաղամասները: Այստեղ, տեղի 12 հազար բնակիչներից բացի, ապաստան էին գտնել նաև շրջակա հայկական գյուղերի 10 հազար բնակիչներ:

Ակմա Յոհանստանի վկայությամբ. «Հայերը իրենց տուննեն դրւու չին ելլեր, անոնք բոլորովին անշարժ կը սպասեին, միայն երբ զինվորները կը խուժեին ոմբակոծումներն ավերակի վերածած տուններն ներս, այն տանը է, որ կը փորձեին դիմադրություն գույց տալ կարելին նղածի չափ ողջ մնալու համար»:

Չորի թաղում հայ մարտիկներին հաջողվում է դիպուկ կրակոցներով ոչչացնել թուրքական իրենտանային հաշվարկը: Մինչև հունիսի 29-ը հակառակորդը որևէ շոշափենի արդյունքի չի հասնում: Անզեն տղամարդիկ ուշադրություն չդարձնելով թուրքական կրակին, արագորեն վերականգնում են ոմբակոծությունից վնասված կամ քանդված դիրքերը: Իրադրությունը կտրուկ փոխվում է, երբ թուրքերը չորս թնդանութների կրակը կենտրոնացնում են Վերին թաղի վրա: Դրա հետևանքով դիրքերի մեծ մասն այն աստիճանի է ավերվում, որ մարտիկները նահանջում և կենտրոնանում են թաղի վերին մասում: Այստեղ՝ գիշերը, տեղի է ունենում դիմադրական ուժերի հրամանատարների՝ Լ. Ապահանի և Ռ. Կոտոյանի խորհրդակցությունը: Նրանք վճռում են ուժերը կենտրոնացնել Ձորի թաղում, որը դառնալու էր դիմադրության կենտրոնը:

Հունիսի 29-ին մարտեր են տեղի ունենում Բրտի թաղում: Այստեղ, հա-

յերն ունենալով սակավաթիվ ուժեր, ամրանում են երկու տներում և կրվում մինչև ուշ երեկո: Թուրքական հրետանին ամբողջությամբ քարութանդ է անում տները՝ փլատակների տակ թողնելով հայ մարտիկներին:

Հունիսի 29-ին պաշտպանական հիմնական մարտերը տեղի են ունենում Զորի թաղում: Հակառակորդն այս ուղղությամբ կենտրոնացնում է գլխավոր ուժերը: Հրետանու անընդմեջ կրակը զգալի կորուստներ է պատճառում հայ մարտիկներին:

Հունիսի 30-ին թուրքերն ու քրդերն ավելի մեծ ուժերով վերակառւմ են հարձակումը: Հրետանին շարունակում էր Զորի թաղի հրետակոծությունը: Ի վերջո հակառակորդին հաջողվում է ճնշել մշեցիների ոիմադրությունը: Հայ մարտիկները, հ. Կոտոյանի գլխավորությամբ, արիարար մարտնչում են մինչև վերջին փամփուշտը և կնքում իրենց մահկանացուն:

Մշեցիների դիմադրությունը ճնշելուց հետո թուրքերն ու քրդերը քաղաքում կրտսորած են սկսում: Ա. Յոհանսոնի վկայությամբ, թուրք ոստիկանները հրդեհում էին մամկատունը՝ հայ որբերի հետ միասին: Ոստիկաններն առանձնահատող «հաճույք» են ստանում կրակելով վարփող մանկատան շենքում այս ու այն կողմ վազող և փրկության ելք որոնող երեխաների վրա: Թուրք բարձրաստիճան սպաների խստովանությամբ՝ Մուշում իրենք ավելի ուժեղ դիմադրության էին սպասում:

Բացի Մուշ քաղաքից, ինքնապաշտպանական մարտեր են տեղի ունենում նաև շրջակա հայկական գյուղերում: Այսպես, Կառեն գյուղի բնակիչները, ֆիդայի Մկրտչի ղեկավարությամբ, հուլիսի 11-ին մի ամբողջ օր դիմադրում են թուրքերին: Սակայն ուժերն անհավասար էին, և հակառակորդը ճնշում է հայերի պաշտպանությունը և ներխուժում գյուղ, սպասում բնակիչներին, և կառենը ավերում:

Սուրբ Կարապետ վանքի շրջակայրի անտառներում գտնվում էին մեծ թվով փալստականներ: Նրանց հետ հաշվնարդար տեսնելու համար իշխանություններն ուղարկում են քրդական ջոկատներ: Հուլիսի 7-ին Խծանու ծորում տեղի է ունենում առաջին բախումը, որի ընթացքում հայերը տալիս են զգալի թվով զոհեր: Հաջորդ օրը՝ հուլիսի 8-ին, հայերը անցնելով հակահարձակման, պարտության են մատնում հակառակորդին: Քրդերը տալիս են 17 սպանված, որոնց թվում նրանց գեղագիտներից մեկը՝ Արդուլլահ բեյը:

Ընդհարումները ս. Կարապետի շրջանում շարունակվում են մինչև 1915 թ. հոկտեմբերի սկիզբը:

1915թ. մարտից սկսած՝ թուրքական կանոնավոր բանակի ստորաբաժանումները և քրդական ջոկատները հարավից ուղղվում են Սասուն: Այստեղ կար մոտ 50 հազար հայ բնակչություն՝ ներառյալ այլ վայրերից ապաստանածները: Սասունի ինքնապաշտպանությունն իրականացնում էին 600 մարտիկներ: Հայերն ունեին մոտ 800 որսորդական և 150-200 մարտական հրացաններ:

Առաջին բախումները տեղի են ունենում ապրիլ-մայիս ամիսներին Խուլֆի և Խիանքի շրջաններում: Օգտագործելով թվային գերակշռությունը՝ հակառակորդը հարկադրում է ինքնապաշտպաններին նահանջել Անդրկ. Սասունը դանդաղրեն օղակվում է:

Թուրքական հրամանատարություն, Մուշի հայության հետ հաշվեարդար տեսնելուց հետո, ազատված ուժերը տեղափոխում է Սասուն՝ ուժերի թիվը հասցնելով 30 հազարի:

Հուլիսի 19-ին օսմանյան ուժերն անցնում են լայնածավալ հարձակման: Կենտրոնացնելով զգալի ուժեր՝ հուլիսի 23-ին, թշնամին գրավում է Անդրկ լեռան ստորոտին գտնվող Հրսոյի գոմերը, սրբաշահությանը: Նման օրհասական և ծանր պայմաններում սասունցիները մարտնչում էին կատաղի հուսահատությամբ: Իրենց եղբայրների և ամուսինների հետ կռվում էին կանայք և աղջկներ՝ թշնամու վրա բարձունքից ժայռաքններունք գլորելով: Նման վճռական հակահարվածը հարկադրում է թուրք-քրդական ուժերին նահանջել և նույնիսկ զինադադար խնդրել՝ մարտադաշտից սպանված ու վիրափորված յուրայիններին հավաքելու համար:

Ա. Յոհանսոնի վկայությամբ, սասունցիների դիմադրությունից զագազած թուրքական հրամանատարությունը սկսում է խաղաղ հայ բնակչության զանգվածային կոտորածներ՝ մինչ այդ չտեսնված ու չլսված դաժանությամբ. «Այդ խժեմությունը նույնիսկ քյուրունու համար անմարդկային թվեցավ, որու հետևանքով անոնք մերժեցին սպանել կիներն ու մանուկները: Այդ բանը թուրքերը անձնապես կատարեցին»:

Զնայած սասունցիների համար դիմադրությանը հակառակորդը պաշարման օղակն օրեցօր ավելի ու ավելի էր սեղմում: Սասունի ինքնապաշտպանության ղեկավարությունը վճռում է. «Յուրաքանչյուր իր զենքն ու փամփուշտը միասին առնե և տեր կանգնի իր ընտանիքին: ... Անոնք, որ կը հաջողին պատսպարվել, թերևս հետագային բախտ ունենան վերադարձող կովկասյան ուժերը դիմավորելու»:

Այլ համոզման էր կողքնցի Տիգրանը. «Եթե մենք հայրենիքը և ժողովուրդը սիրողներ ենք, պետք է, որ մասն իրենց (ժողովրդի-Ռ. Ս.) հետ և մինչև վերջին շունչներս մեռնինք կամ ապրինք, բայց միշտ ժողովրդի հետ, անոր ճակատագրով»: Կողքնցի Տիգրանը հավատարիմ է մնում երդմանը և չի լրում ժողովրդին: Նա իր մահկանացուն կնքում է շարդարարների դեմ մղած անհավասար պայքարում:

Ասդոկի, Ծովասարի և Գերինի լնոններում մարտերը շարունակվում են մինչև օգոստոսի 3-ը: Հակառակորդին հաջողվում է ճնշել դիմադրության հիմնական օջախները և բնակչության մեծ մասին սրի քաշել:

Երբ հայտարարվում է, որ Սասունի հայությունն ամբողջովին ոչնչացված է, Ա. Յոհանսոնի վկայությամբ. «Վիմա այլս բոլոր երկրին մեջ մեկ հատ քրիստոնյա-շուն չմնաց ...»: Թուրքերին ապշեցրել էին սասունցիների անզիջում մարտերը, և բարձրաստիճան սպաներից մեկը խոստովանել էր Ա. Յոհանսոնին. «Ավասո, որ մեր քանակին մեջ չեն այդ մարդիկ (սասունցիները-Ռ. Ս.)»:

1915թ. հունիսի 3-ի ընդհարումն առիթ էր սկսելու Ծափին-Գարահիսար քաղաքի հայկական թաղամասի հայության հինքնապաշտպանությունը: Թուրքերից կազմված ջոկատը շտապում է գրավել քաղաքի հարևանությամբ գտնվող կինավորց բերդը: Հայերը կրակ են բացում և քշում թուրքերին: Գարեգին Պարոնվարդյանի գլխավորությամբ զինված հայերի մի խումբ գրավում է բերդը: Միաժամանակ, հայ մարտիկները, դիրքավորվելով սուրբ Փրկչաց թաղում՝ Վահան Հյուսիսյանի գլխավորությամբ, կազմակերպում են դիմադրություն՝ թույլ չտալով թուրքերին ներխուժել հայկական թաղամաս:

Ծափին-Գարահիսարի ինքնապաշտպանությունը դեկավարելու համար կազմվում է Զինվորական խորհուրդ, որը գլխավորում է Ղուկաս Տեղվելթյանը (Ղուկաս Ալպար): Անդամներն էին՝ Վ. Հյուսիսյանը, Հմայակ Գարակյոյյանը, Գ. Պարոնվարդյանը, Ալեքսան Տագենյանը և Խոսրով Մեծատուրյանը:

Հաշվի առնելով, որ քաղաքում ինքնապաշտպանության համար նպաստավոր պայմաններ չկան, որոշվում է



**Ղուկաս Ալպար**

դիմադրության օջախ ընտրել Շապին-Գարահիսարից ոչ հեռու գտնվող քերդը: Բնակչությունը՝ 5062 հոգի, սկսում է տնդափոխվել քերդ: Նրանց են մշանում քաղաքի մոտ գտնվող Ծիպեր հայկական գյուղի բնակիչները:

Զինվրական խորհուրդը քերդը բաժանում է յոթ պաշտպանական դիրքերի, յուրաքանչյորում՝ 8-25 մարտիկ: Կար փորբաթիվ պահեստագոր:

Հունիսի 5-ի վաղ առավոտյան, երբ քերդը շրջապատված էր թուրքական 2500 զինվորներով, Սեբաստիայի վային առաջարկում է հանձնվել և զայթել:


Շապինգարահիսարցիները մերժում են հետևյալ խոսքերով. «Մեռնելու երկու ձև կա՝ պատվավոր և անպատիկ, թող աշխարհ ըստ, թե շապինկարահիսարցիք պատվով մեռն»: Մերժում ստանալով՝ հակառակորդը սկսում է հրետակոծությունը:

Հրետանու հայտնվելը ճնշող տպավորություն է թողնում բնակչության վրա: Այն փարատելու համար դպրոցական նրգչախումբն ուսուցչի դեկավարությամբ սկսում է հայրենասիրական նրգեր նրգել: Նրանց է միանում ողջ քերդը, իսկ դիրքերից լսվում են «Կենցել Անդրանիկը» և «Կենցել Շապին-Գարահիսարի փառքը» բացականչությունները: Միաժամանակ Դ. Տեռվլեթյանը շրջում է դիրքից դիրք՝ խրախումնելով մարտիկներին, հրահանգելով նրանց խնայել փամփուշտները, իսկ ինքնաշենն նոնակներն օգտագործել միայն ծայրահեղ դեպքում:

Բնակչությունը, հիմնականում կանայք, վտանգելով իրենց կյանքը, զիշերով զաղտագողի իջնում էին քաղաք, հայկական թաղամասից հավաքում պարեն և քերդ բարձրացնում: Այն բանից հետո, երբ հակառակորդն ամուր օդակում է քերդը, այլևս հնարավոր չի լինում իջնել հայկական թաղամաս:

Հայկական ինքնապաշտպանությունը ճնշենալու նպատակով Էրգրումից քերվում է 600 զինվոր, չեթեական ջնկատ և մեկ թնդանոթ:

Հունիսի 10-ից 16-ը հակառակորդն անդնդիատ հրետակոծում է քերդը և գրոհում հայկական դիրքերը: Այդ մարտերի ընթացքում երկու կող-



**Կահան Յյուսիսյան**



## Արամ Չայկազ

Մերն էլ զգալի կորուստներ են ունենում: Մարտիկներին ոգևորելու նպատակով կռվի ամենաթենժ պահին հայտնվում էր աշակերտական նվազախումբը և հայրենասիրական մեղեդիներով ոգևորում մարտիկներին:

Հունիսի 20-ին օսմանյան ուժերն անցնում են լայնածավալ հարձակման: Դա նպատակ ուներ առավել վտանգված դիրքերում հնարավորություն չտալ հայերին պաշտպանական այլ տեղամասներից ուժեր կենտրոնացնել: Հակառակորդին՝ թվով 200 զինվորների, հաջողվում է ճնշենլ պաշտպանությունը:

Նր և մոտենալ բերդի դրանը: Այդ ծանր պահին, 14-ամյա Հմայակ Թևերնելյանի մետած նոճակը կասեցնում թշնամու առաջխաղացումը: Օգնության հասած մարտիկները կրակ են բացում հակառակորդի վրա: Կանայք և աղջկերները թուրք զինվորների վրա բարձունքից քարեր և ժառարինքներ են գլորում: Ինքնապաշտպաններից 50 հոգի զոհվում են, որոնց թվում նաև քաջարի հ. Թևերնելյանը:

Այդ խայտառակ պարտությունից հետո թուրքական հրամանատարությունը չի համարձակվում դիմել նոր զրոհների և բավարարվում է բերդի և հայկական դիրքերի հրետակոծությամբ:

Զնայած հաղթանակին՝ իրադրությունը մնում էր սպառնալից: Հունիսի 23-ին մնացել էր միայն պարենի 3 օրվա պաշար: Զինվորական խորհուրդը վճռում է՝ քանի դեռ սովոր ուժասպառ չի արել մարդկանց, ճնշենլ հակառակորդի պաշարումը: Միաժամանակ ընդունվում է չափազանց ծանր որոշում. ովքեր ի վիճակի չեն մասնակցելու գործողությանը, պնտը է մնան բերդում:

Հունիսի 26-ին տեղի է ունենում պաշարումը ճնշենլու առաջին փորձը, որն ավարտվում է անհաջողությամբ:

Հունիսի 29-ի ուշ զիշերը, մոտ 1000 հոգուց բաղկացած հայերի ջոկատը, մի քանի ուղղություններով զրոհում է բերդը շրջափակած թուրքական ուժերի վրա: Ծանր մարտերով ինքնապաշտպաններին հաջողվում է անցնել հակառակորդի նրկու արգելափակիչ գոտիները: Երրորդին մոտենալիս, հայերը զգում են, որ թշնամին վերախամբավորել

Է ուժերը և ավելի կազմակերպված դիմադրություն է ցույց տալիս: Օգտագործելով ինքնաշխն նոնակները, հայ մարտիկներին հաջողվում է հաղթահարել նաև երրորդ, ապա չորրորդ արգելագոտիները: 870 հայերի հաջողվում է ճնշել և դուրս գալ թուրքական շրջապատումից:

Շապինգարահիսարցիների հաջող ճերնարկից զազագած՝ թուրքական հրամանատարությունն իր ողջ կատարությունը թափում է բերդում զտնվող բնակչության վրա: Մայրերին երեխաների հետ նետում են քարափից, կանանց մի մասին բռնի տանում են հարեմներ:

Միաժամանակ խուզարկվում են Շապին-Գարահիսարի հունական թաղամասը՝ վնատելով թաքնված հայերին: Հոյների տներից դուրս են բերդում 600 հայ կանանց ու երեխաների: Նրանք մահապատժի են ենթարկվում իրենց թաքցնող հոյների հետ միասին: Ողջ են մնում միայն մի քանի երեխաներ:

Թուրքական հրամանատարությունը կազմակերպում է օղակումից դուրս պրծած հայերի հետապնդում: Հայկական ջոկատներից մեկը՝ Վ. Հյուսիսամի զիլավիրությամբ, կարողանում է հասնել Փոքր Կենտախոր կոչվող լնուան վրա գտնվող անտառը: Այստեղ ջոկատը բաժանվում է փոքր խմբերի, հուսալով, որ այդ կերպ մոլորության մեջ կզցեն հակառակորդին: Անհավասար մարտերում զրիվում են Դ. Տեղվերյանը, Վ. Հյուսիսամը և ուրիշներ: Շրջակայրում գտնվող հունական զյուղերի մատույցներում դարաններ են դրվում, իմանալով, որ հայերը սննդամթերքի կարիք ունենալով, կմտնեն հունական զյուղերը: Եվ խկապնա, հայկական ուժերի մի մասն ընկնում է այդ ծուղակները: Մարտիկների մեծ մասը զրիվում է: Մյուսներին հաջողվում է ապաստանել մոտակալնությունը և շարունակել դիմադրությունը:

1916թ. ապրիլին Շապին-Գարահիսար այցելած գերմանացի կապիտան Վերներ ֆոն Շուլենբերգի (հետագայում՝ 1934-1941թթ. Գերմանիայի դեսպանը ԽՍՀՄ-ում: 1944թ. մասնակցել է Ա. Հիտլերի դեմ իրականացված անհաջող մահափորձին, որի համար ենթարկվել է մահապատժի) վկայությամբ, ինքնապաշտպանությունից գրեթե մեկ տարի անց բերդում կարենի էր տեսանել. «Շորերի պատառիկներ, զանգեր և մարդկային այլ մնացորդներ: Տեսարանն այնքան տհաճ էր, որ իմ մահմեդական ծառան խնդրեց հեռանալ ամրոցից, քանի որ այդ ամենին այլևս չի կարող դիմանալ»:

## Յոզհատ գալարի հայկական գյուղերի ինքնապաշտպնությունը

1915 թ. ապրիլի 30-ին Յոզհատի կայմակամ Քեմալ բնյը հրամայում է Զար գյուղի բնակչությանը երկու օրվա ընթացքում իշխանություններին հանձնել ունեցած զենքը: Բնակչության շրջանում տարակարծություն է առաջանում: Ինքնապաշտպանության կողմնակիցները բարձրանում են Ազ-Դադ լեռը: Դրանից անմիջապես հետո թուրքական զորքը և մահմետական ջոկատները հարձակվում են գյուղի վրա: Բնակչությանը քշում են Աղեռլեն կոչվող ձորը և բոլորին կոտրում: Ազ-Դադ են բարձրանում նաև շրջակա հայկական գյուղերի բնակիչները: Նրանցից կազմվում է մարտական խումբ՝ Արամ Չափուշի զլավիրությամբ:

Մեղրակ Չափուշի զլավիրությամբ հայ մարտիկները գրոհում են Զար գյուղում ամրացած հակառակորդի վրա, սակայն անհաջողության մատնվելով նահանջում են: Առավել արյունավետ է լինում Սրբակու կոչվող ձորում ոստիկանական ջոկատի վրա կատարած հարձակումը: Հայ մարտիկներին օժանդակում են կանայք և աղջիկները: Հակառակորդը, 12 սպանված թողնելով, խուճապահար փախչում է:

Թուրքական իշխանությունները, զազագած հայերի հանդուզն հարձակումներից, նրանց դեմ են ուղարկում խոշոր ռազմական ուժեր: Ազ-Դադի վրա էին ամրացել մոտ 1200 հայեր: Մի քանի ամիս տևած կատաղի մարտերից հետո հայ մարտիկներից ողջ են մնում ընդամենը 500 հոգի: Նրանց մի մասը զոհվում է հետագա մարտական ընդհարումների ժամանակ:

Սկսած 1916 թ. դեկտեմբերից Ազ-Դադում հավաքվում են 400 հայեր՝ Արամ Չափուշի և Հաճի բնյի զլավիրությամբ: Նրանք իրենց պայքարը շարունակում են նաև 1917 թ. ընթացքում:

Հայկական Պուրճ Գշլա, Էյլենճէ և Գում Գույու գյուղերի մոտ ույթ հազար բնակչությունն ինքնապաշտպանության համար ընտրում է Գում Գույու գյուղը: 1915 թ. հուլիսի սկզբներին տեղի ունեցավ առաջին բախումը թուրքական կանոնավոր բանակի զորամասների, նրանց միացած մահմետական ջոկատների և հայ ինքնապաշտպանների միջև: Հայերի դիմադրությունը դեկավարում էին Աքիսողում Առաքելյանը և Հաճի Պետք Փափազյանը: Հակառակորդի բոլոր գրոհները ետ են մդվում:

Հայերի հետ հաշվեհարդար տեսանկու և ուժերը համարելու նպա-

տակով, իշխանությունները ոտքի են հանում Պուրուն-Էռքեն չերքեզական գյուղի բնակիչներին: Վերջիններս, թալանի ակնկալիքով, պատրաստակամություն են հայտնում:

Նրանց գրոհը նույնպես անհաջողության է մատնվում: Հայ մարտիկները կազմակերպված դիմադրություն են գույց տալիս: Չերքեզները, 35 սպանված տալով, փախչում են:

Թուրքական իրամանատարությունը շտապ կարգով իրետանի է բնորում և միայն դրանից հետո կարողանում է ճնշքն հայերի պաշտպանությունը: Ինքնապաշտպանների և խաղաղ բնակչության մեծ մասը կոտորվում է:

## *Սունտիայի հայության հերոսամարտը Ֆքնտրճագի և Ուրֆայի զոյամարտերը*

1915թ. հուլիսի վերջներին Երիտթուրբական իշխանությունները Սունտիայի հայությանը հրահանգում են տարագրվել: Սունտիան գտնվում է Միջներկրական ծովի առափնյա շրջանում, բաղկացած էր վեց հայկական գյուղներից՝ Քեպուսիկ, Վագրփ, Հաճի Հապիպի, Յողունօլուր և Բիթիաս: Բնակիչների մեծ մասը վճռում են չենթարկվել, այլ բարձրանալ մոտակա Մուսա լեռը՝ իրենց հետ տանելով անհրաժեշտ իրենք և ընտանի կենդանիներ: Միայն Քեսապի 8-10 ընտանիքներ, Պիթիասի և Հաճի Հապիպի բնակիչների զգալի մասը, հավատալով իշխանությունների սին խստումներին, ենթարկվում են տարագրության: Հալեպի ավստրո-հունգարական հյուպատոս Դանիինին 1915թ. հոկտեմբերի 25-ին հայտնում է, որ Սունտիայից աքսորվածները՝ թվով 3 հազար հոգի, կոտորվում են օսմանյան զորքերի կողմից:

Մինչև օգոստոսի 3-ը օսմանյան իշխանությունները մի քանի անգամ «հիշեցնում» են սունտիահայությանը, որ պետք է տեղահանվեն: Սակայն հայերը ուշադրություն չեն դարձնում և տենդագին նախապատրաստվում են ինքնապաշտպանության: Լեռ էին բարձրացնել Սունտիայի հայկական վեց գյուղների 6311 բնակիչներից 4231-ը:

Հայերը ճամբարում են Մուսա լեռան երեք տարբեր շրջաններում: Նրանցից յուրաքանչյուրում ընտրվում են առանձին զինվորական մարմիններ: Փաստորեն, սկզբնական շրջանում սունտիահայերի զինական ուժը մասնատված էր, չկար պաշտպանական գործողությունները կարգավորող և ղեկավարող մեկ միասնական մարմին: Այդ ամենը եղի էր լուրջ հետևանքներով և կարող էր վտանգել ինքնապաշտպանությունը:

Սունտիահայությունն ուներ սակավ քանակությամբ զենք և զինամթերք: Կար մոտ 600 որսորդական, 95 «Գրա», 11 «Մաուզեր» և այլ սիստեմի հրացաններ:

Զենք կարող էին կրել մոտ 800 հոգի, սակայն զենքի անբավարար քանակության պատճառով մարտերին մասնակցում էին 400-ից 500 հոգի: Որսորդական հրացանները մարտերում գրեթե չօգտագործվեցին, քանի որ անընդհատ տեղացող անձրևների հետևանքով գրեթե անգործածելի էին դարձել:

Անտիոքի Երիտթուրբական իշխանությունները սունտիահայերի

դեմ կենտրոնացնում են երեք հազարի հասնող կանոնավոր բանակ և մինչև չորս հազարի հասնող մահմեդականներից կազմված ուժեր:

Օգոստոսի 7-ին, իսկ ըստ Հարեթ Իսլենտերյանի՝ 8-ին, տեղի է ունենում առաջին մարտը: Թուրք զինվորները, մոտ 200 հոգի, առանց պատշաճ հետախուզության, առաջանում են դեպի հայկական դիրքերը: Թուրք սպաները պարձեցնել են, որ մեկ օրում հաշվենարդար կտնանեն հայերի հետ: Սակայն սուստիհայերի թևային և ճակատային կրակով հակառակորդի գրոհը հետ է մղվում: Օգոստոսի 10-ի վաղ առավոտյան 1500-ից ավելի թուրք զինվորները, օգտվելով մառախուղից, աննկատ մոտենում են հայկական դիրքերին և անակնկալ հարձակումով գրավում: Հայերը նահանջում և ամրանում են պաշտպանական երկրորդ գծում:

Հակառակորդի հետագա առաջխաղացումը ձախողելու գործում բացարձիկ է Պետրոս Գալասյանի քաջությունը: Նրան հաջողվում է դիպուկ կրակոցներով ոչնչացնել թուրք հինգ հրետանավորներից չորսին: Ապա ինքնապաշտպաններն անցնելով հարձակման՝ ստիպում են թուրքերին նահանջել:

Առաջին ընդհարումների վերլուծությունը բացահայտեց հայկական պաշտպանության մեջ տեղ գտած թերությունները, որոնցից առաջինն ու ամենազլաւավորը՝ միասնական հրամանատարության բացակայությունն էր և ուժերի գրվածությունը: Ուստի, օգոստոսի 11-ին բնակչությունը և ամբողջ ուժերը կենտրոնացվում են մեկ վայրում՝ Տամալճրգում: Այն գերիշխող և դիմադրության համար առավել հարմար դիրք ուներ: Կազմվում է վարչական մարմին, որի անդամներն են՝ Տիգրան Անդրեասյանը (նախագահ), Հեթում Ֆիլյանը, Սահակ Անտերյանը, Միքայել Կենենցյանը, Խաչեր Մարտիրոսյանը, Հաքեթ Իսկենտերյանը, Մովսես Տեր-Գալուստյանը և ուրիշներ՝ թվով 16 հոգի: Ռազմական դեկավար դարձավ Եսայի Յաղորեյանը:

Ինքնապաշտպանական ուժերը բաժանվում են 43 տասնյակի՝ իրենց հրամանատարներով: 10-12 տարեկան երեխաները կատարում են կապավորի դեր: Առանձնազգում է պահենատագործը:

Օգոստոսի 19-ին հակառակորդը մի քանի ուղղություններով անցնում է լայնածավալ հարձակման: Թուրքական հրետանու կրակը զգալիորեն նպաստում է նրանց առաջխաղացմանը: Ծանր կորուստների գնով թշնամուն հաջողվում է ընդհուպ մոտենալ հայկական դիրքերին և տեղ-տեղ ձեռնմարտի բռնվել: Կովին մասնակցում էին նաև հայ կանայք, որոնք թշնամու վրա գլորում են ժայռաբեկորներ:

Կատաղի և նրկարատու մարտերից հետո, զգալի կորուստներ կրած հակառակորդի սպաները, որոշում են դադարեցնել հարձակումը և վերսկսել օգոստոսի 20-ին: Դա հնարավորություն տվեց սուստիահայերին վերախմբավորել ուժերը, օգտագործել խավարը և անակնկալ գրոհնել: Հայերի հանդուգն ձեռնարկն ավարտվեց հաջողությամբ: Թշնամին չդիմանալով փախուստի դիմեց: Մարտադաշտից հայերը հավաքնեցին «Մառուցեր» սիստեմի յոթ հրացան և 2500 պահունակ փամփուշտ:

Օգոստոսի 19-ին Հալեպի ամերիկյան հյուպատոս Ջ. Ջեկսոնը հաղորդում է, որ Սուստիայի հայերն արդյունավետ դիմադրություն են ցույց տալիս թուրքերին: Իսկ Հալեպի գերմանական հյուպատոս Վ. Ռյուսերը սեպտեմբերի 3-ին հաղորդում է, որ Անտիոքի երիտրուրական իշխանությունները նոռանդրուն միջոցների են ոիմում Մուսա լոռան վրա ապաստանած հայերին պատժելու համար: Քանի որ տեղանքը դժվարամատչելի էր, և զորքերը վատ էին մարզված, այդ իսկ պատճառվ էական հաջողություն չի գրանցվում: Միայն առաջին օրը մղված մարտի ընթացքում թուրքերն ունենում են 30 վիրավոր:

Զնայած մարտական հաջողություններին՝ իրադրությունը մնում էր սպառնալի: Լեռան վրա ապաստանած հայերին սպասվում էր սովորականություն: Բացի այդ, հակառակորդը լրացնուից ուժեր էր բերել, զորքի թվաքանակը հասցըն էր 15 հազարի: Սուստիահայերի համար փրկության միակ նլքը Միջնորդական ծովն էր, որտեղ պարեկություն էին առնում բրիտանական և ֆրանսիական ռազմանավերը: Նրանց ուշադրությունը գրավելու նպատակով հայերը պատրաստում են նրկու դրոշակ: Առաջինի վրա ասեղնազործված էր մեծ կարմիր խաչ, իսկ մյուսի վրա անգլերեն գրված էր. «Քրիստոնյաները վտանգի մեջ են»: Երկու դրոշակներն ամրացվում են այնպիսի տեղերում, որպեսզի նկատենի լինեն ծովից: Անհաջողությամբ է ավարտվում մի խումբ լողորդների Ալեքսանդրեա հասնելու փորձը: Արհեստավորներին հանձնարարվում է լաստեր պատրաստել՝ վտանգավոր իրավիճակի դեպքում բնակչությանը դրանցով կիպրոս տեղափոխելու համար:

Մի շարք անհաջողություններից գազազած թուրքական հրամանատարությունն այլևս ակտիվ ռազմական գործողությունների չի դիմում և ավելի է սեղմում պաշարման օղակը՝ վճռելով ինքնապաշտպաններին ստվի մատնել:

Օգոստոսի վերջերին, հանկարծ մշուշի միջից, ծովափից բավակա-

նին հեռու, երևում է հայերի կողմից այդքան երկար սպասված նավը: Այդ մասին S. Անդրեասյանը հետևյալ վկայությունն է թողելի իր հուշերում. «Մշուշի մեջեն հանկարծ մարտանավ մը երևցեր էր, որ սակայն դժբախտաբար կրնակը դարձուցեր էր արդեն՝ մեզմն նկատվել առաջ: Հույսն ու հուսահատությունը իրարու խառնվեցան այդ րոպեին: Անմիշ ջապես բլուրներու վրա բազմաթիվ դրոշակներ պարզվեցան, խարույկներ վառվեցան ու բարձրակոչ աղադակներ բարձրացան, բայց իգոր: Նավը խուլ և անտարբեր շարունակեց ընթացքը դեպի Իսրայելի նախարարուն (Ալեքսանդրե-Ռ. Ո.):» իր ետևը թողելով 4000-է ավելի հուսախաք սրտեր, որոնք ակնապիշ կը դիտեին անոր ետևեն տիսուր ու դառնազին»:

Սեպտեմբերի 5-ին ֆրանսիական «Գիշեն» հածանավն անսպասելի իրեն հայտնվում է Մուսա լեռան ափամերձ ջրերում: Նկատելով հայերի ազդանշաններ՝ 2-րդ կարգի կապիտան Բրիսոնը հրամայում է կապ հաստատել նրանց հետ: Ռազմանավ բարձրացած Խաչեր Տումանյանը նավապետից օգնություն է խնդրում: Բրիսոնն առաջարկում է սպասել ութ օր, որպեսզի ինքը կարողանա կապվել հրամանատարության հետ և հայերին հայտնել որոշումը:

Նավապետը տեղեկանալով, որ Չեպուսինում գտնվում են թուրքական զորամասեր և զինապահենստ, իրենակոծության է ենթարկում դրանք: Ֆրանսիական հածանավի անսպասելի հայտնվելը հարկադրում է թուրքական հրամանատարությանը շտապ գործողությունների դիմել: Նրանց մտահոգում է, որ Միջներկրական ծովի ափամերձ շրջանում Անտանտը կարող է հենակետ ձեռք բնել, ուստի թուրքերը վճռում են վերջնականապես հաշվեհարդար տեսնել հայերի հետ:

Սեպտեմբերի 7-ին հակառակորդը ձեռնարկում է լայնածավալ և հումկու հարձակում, որը շարունակվում է մինչև երեկո: Սակայն թուրքերը ոչ մի արդյունքի չեն հասնում: Այդ մարտի ժամանակ սունտիահայերը, «նրգելով ու իրար հետ կատակելով մարտնչում էին կատաղած թշնամու դեմ»:

Սեպտեմբերի 9-ին թուրքական հրամանատարությունը ձեռնարկում է նոր հարձակում: Մարտին ականատես նավապետ Բրիսոնը վկայում է. «Թուրքական հորդաները ուղղակի ծով էին կազմել և կատաղած ալիքների նման առաջ էին զալիս. իրենակին (թուրքական-Ռ. Ո.) արագ կերպով կրակում էր»: Նա նկատում է, թե ինչպես հայերի տարասարդներից մեջը անվախ մարտի է բռնվում հակառակորդի հետ՝ սպանելով նրանցից երեքին, այդ թվում հրամանատարին: Հան-

դիպնով սուետիահայերի անսպասելի և հումկու հակահարվածին. «Թուրքերը երկշու նապաստակների նման կրունկ առնում, փախչում են: Եթե խնդիրը միայն այդ ուժերին մնացած լիներ, անկասկած հայերը բոլորին ջարդ ու փշոր արած, պիտի փախցնեն: Բայց երթալով՝ թուրքական հրետանին սաստկացավ, կրակը դարձավ լսիստ, արագ ... Ծուրջս նայեցա, տեսա քովս կանգնած պաշտոնյաներս, կամրջակի վրա հավաքված նավաստիները, արտասուրք աշքներին, դողդողում են սուրբ Վրեժիսնդրությամբ լցված՝ նշանի սպասում, որ առաջ մղվեին-... այդ ժամանակ էր, որ հրաման արձակեցի՝ «կրակ»: Օգտվելով ֆրանսիական հրետանու աջակցությունից, հայ մարտիկներն անցնում են հակահարձակման և զլխովին ջախչախում թուրքերին: Նավապետ Քրիստինի խոստովանությամբ. «Դնո՞ւ այդպիսի խայտառակ և ամորահար փախուստ կովի դաշտից ոչ տեսած էի, ոչ կարդացած»:

Մեպտեմբերի 10-ին հասնում է բաղճալի օգնությունը: Անտանտի ռազմանավերը կրկին հրետակոծության են Ենթաքում հակառակորդի դիրքերը: Դրանից օգտվելով, Ե. Յաղությանի հրամանատարությամբ մի խումբ մարտիկներ, հարձակվում և ջախչախում են թուրքական մի գորաջոկատ:

S. Անդրեասյանը հանդիպում է փոխծովակալ Դարտիքնազ դյու Ֆուրնիկ հետ: Վերջինս, «չունենալով իր կառավարության համաձայնությունը, ստացած լինելով անզիհացիների մերժումը՝ մուսալեցիներին կիպրոս տնդափոխելու», սեպտեմբերի 12-ից սկսում է հայերի տարհանումը: Այդ աշխատանքները դեկապարում է «Դեզե» հածանավի հայազգի սպա Տիգրան Թերեյանը:

Երկու օրվա ընթացքում կանայք, երեխաները և ծերունիները տեղափոխվում են նավերը: Տղամարդիկ այդ ժամանակ շարունակում էին մնալ դիրքերում՝ ապահովելով յուրայինների անվտանգ տարհանումը: Ընդհանուր առմամբ փրկվում են 4058 սուետիահայեր, որոնք տնդափոխվում են Եգիպտոսի Պորտ-Սահիդ քաղաքը:

Հայ բնակչության ինքնապաշտպանությունն իր արտացոլումն է գտնել ավստրիացի նշանավոր գրող Ֆրանց Վերֆենի «Մուսա լեռան 40 օրը» գեղարվեստական բարձրարժեն վեպում:

## Ֆընտրճագի ինքնապաշտպանությունը

Ֆընտրճագ հայկական գյուղը գտնվում էր Տավշան լեռան ստորոտին, Բազարձոր կոչված հովտում, Մարաշից մոտ 23 կմ հարավարևմուտք: Գյուղն ուներ 550 տուն, 3 հազար բնակիչ, որոնցից 2200 հայ: Ֆընտրճագն իր անառիկ դիրքի համար կոչվում էր նաև Փոքր Զեյթուն: Այստեղ էին գտնվում 22 գեյթունցիներ՝ Նշան Նորաշխարհյանի և Փանոս Հաճընյանի զիսավորությամբ:

Տեղի բնակիչներն ականատեսն էին Զեյթունի արսորի և զիտակցելով, որ իրենք նույնապես նոյն քախտին են արժանանալու, որոշում են դիմել ինքնապաշտպանության: Նրանք աջակցություն են խնդրում անակնկալ հայտնված զեյթունցիներից: Նրանք սկզբում հրաժարվում են՝ պատճառաբանելով, որ թուրքական ուժն ավելի հզոր է, իսկ իրենք չունեն անհրաժեշտ քանակությամբ զենք, զինամթերք և մարտական ուժ: Սակայն ի վերջո, տեղի են տալիս ֆընտրճագցիների խնդրանքներին, վճռում են մնալ և մասնակցեն ինքնապաշտպանությանը:

1915 թ. հունիսին Ֆընտրճագ է զալիս երիտրական իշխանությունների պաշտոնյան և պահանջում է հանձնել զենքը և հայտնել զեյթունցիների զտնվելու վայրը:

Գյուղացիները «պատրաստակամությամբ» հանձնում են հիմնականում որսորդական հրազանները, սակայն մերժում են հայտնել զեյթունցիների զտնվելու վայրը:

Զեյթունցիները տեղեկանալով, որ իրենց պատճառով Ֆընտրճագի բնակիչները կարող են բռնությունների ենթարկվել, որոշում են հեռանալ: Սակայն գյուղի դեկավարությունը կրկին խնդրում է նրանց մնալ: Ի վերջո զեյթունցիները տեղի են տալիս:

Ֆընտրճագի վրա առաջին հարձակումը տեղի է ունենում հուլիսի 6-ին: Հայերը զախցախում են ոստիկանական ջոկատը, որը նահանջում է՝ մարտադաշտում թողնելով 30 հրազան և զգալի քանակությամբ փամփուշտ: Ոստիականական ջոկատի երևալը ազդանշան եղավ ֆընտրճագցիների համար՝ նախապատրաստվող տեղահանման մասին: Դա հարկադրում է Ֆընտրճագ տեղափոխվել երկու հայկական գյուղերի՝ Տերե-Քենյի (850 բնակիչ) և Քիշիքի (450 բնակիչ) հայությանը:

Ֆընտրճագի պաշտպանությունը դեկավարենու համար ստեղծվում է ինքնապաշտպանական մարմին, որի անդամներն էին Մինաս և Խաչիկ Գալայճյանները, Վարդավար Քնահենայանը, Հովսենի և Նազա-

թե՛ր Գոճանյանները: Մշակվում է գործողությունների հետազա ծրագիր: Առաջին հերթին ոչնչացվում են հարևան թուրքաբնակ զյուղների ռազմական հենակետերը: Մարտական ուժերը բաժանվում են երեք մասի: Առաջինը մնում է զյուղում, երկրորդը պետք է հսկեր Ֆընտրճագի մատուցները, իսկ երրորդը փորձելու էր անցնել Մարաշ: Վերջին մտադրությունը չի հաջողվում իրականացնել ուժերի անբավարարության պատճառով: Անզեն բնակչությանը հանձնարարվում է կառուցնել պաշտպանական ամրություններ և փորել խրամատներ: Չի հաջողվում կապ հաստատել Մարաշի հնչակյանների հետ:

Հուլիսի 31-ին տեղեկություն է ստացվում, որ կալիա բեյը, մոտ երեք հազարանոց զորքով, շարժվում է Ֆընտրճագ:

Կովից առաջ պատարագ է մատուցվում, որից հետո համազյուղացիներին է դիմում ուսուցիչ Խաչիկ Գալայջյանը. «...հայ ազգը դարձի ի վեր ամեն օր կը փճանար, բայց այս անզամ անոր զոյութեան սպառնացող փտանզը շատ ավել մեծ է, և մենք՝ այս մարտիրոս ցեղի զավակներս, ուխտած ենք կովնի և մեռնել հոս, մեր հայրենի բունի մեջ: ...ինքնապաշտպանութեան պիտի դիմենք, մենակ ենք և մեզ օգնութեան գալիք ոչ մի հայ մնացնը է: Հայրենիքի անշեզ սերը և ազատութեան վեհ ու նվիրական զաղափարն է, որ մեզ կը հարկադրե մղել վաղվա օրհասական պայքարը, ճակատամարտը»: Մարտիկները վերջին հրաժեշտն են տալիս մերձավորներին և հարազատներին և դիրքավորվում:

Ֆընտրճագը բաժանվում է վեց պաշտպանական շրջանների: Հարավ-արևմտյան դիրքերը զբաղեցնում են տերերենօյցիները՝ Հռվիաննես Տեր-Վարդանյանի և Եսայի Քենյանի զլյասպությամբ: Ֆընտրճագցիները և զեյթունցիների մի մասը դիրքավորվում են զյուղի հարավային կողմում: Զեյթունցիների մի խումբ՝ Փանոս Չազրյանի հրամանատարությամբ, ամրանում է դպրոցում և եկեղեցու մատուցներում, իսկ Մեսրոպ Չոլագյանի խումբը՝ նրանց միջև: Օսմանյան կանոնավոր բանակի զորամասերին և թուրքական անկանոն ստորաբաժանումներին դիմագրավում էին 500 հայ մարտիկներ՝ զինված 250 հրացաններով և այլ զենքերով:

Ինքնապաշտպանական կոհիվներն սկսվում են հուլիսի 31-ին (ըստ I. Նորաշխարհյանի՝ հուլիսի 26-ին - խմբ.): Հիմնական մարտական զործողությունները ծավալվում են օգոստոսի 1-ից: Հակառակորդը հարձակվում է երկու ուղղությամբ՝ արևմտյան և հարավային: Թուրքական

իրետանին անընդմեջ ոմբակոծում է հայկական դիրքերը: Մարտի ընթացքում կանայք և երեխաները յուրայիններին մատակարարում էին զինամթերք և ջուր:

Ֆընտրճագի ինքնապաշտպանության կարևոր տեղամասերից էր Զեշիր-տօր կամ Չարշը-տար լեռան զագաթի վրա գտնվող դիրքը: Այստեղ ամրացնել էր 35 մարտիկ՝ Խ. Գալայջյանի հրամանատարությամբ: Գիտակցելով այդ դիրքի կարևորությունը՝ հակառակորդը հրետանու և զնդաշիրների ողջ կրակն ուղղում է նրա վրա: Հայ մարտիկները յոթ ժամ դիմագրավում են, սակայն զգալի կորուստները նրանց ստիպում է նահանջնել:

Օսմանյան զորքը, զարգացնելով հաջողությունը, կարողանում է ինքնապաշտպաններին մենք մյուսի ետևից դուրս մղել դիրքերից: Մարտիկները և բնակչությունը ամրանում են եկեղեցում և հարակից տներում: Զինելով բնակչությանը կացիններով, դանակներով և նոյնիսկ քարերով, փորձ է արփում ճեղքել օղակումը, սակայն՝ ապարդյուն: Զինվորները և ամկանոն ջոկատները ոչ միայն ետ են մղում հայերին, այլև սկսում են բնակչության կոտորածը: Սպանդը դադարնցվում է միայն կալիպ բեյի հրամանով:

Զարդարաբներին դիմադրություն են ցույց տալիս դպրոցում և եկեղեցում ամրացած զեյթունցիները: Նրանք ծանր կորուստներ են պատճառում հակառակորդին: Թուրքերը, չցանկանալով նոր զոհեր տալ, հրդեհում են շինությունները: Հայ քաջորդիները կրակի բոցնրում կնքում են իրենց մահկանացուն: Ի վերջո, օգոստոսի 2-ին ավարտվում է Ֆընտրճագի ինքնապաշտպանությունը: 91 երիտասարդների զնդակահարնցին, 100-ից ավելի տղամարդկանց տարան Մարաշ, ուր ողջ ողջ այրեցին: Հայերի կորուստը կազմում էր 2050 հոգի: Մի խումբ զեյթունցիներ՝ Արամ Չոլայյանի գլխավորությամբ, ճնդում են շրջապատման օդակը և հեռանում Ամանոսի լեռները: Ողջ մնացած բնակչությունը արսորվում է: 1918 թ. վերջերին միայն 674 հոգի, հիմնականում կանայք և երեխաներ, վերադարնում են Ֆընտրճագ:

1915թ. նոյեմբերի 8-ին Գնրմանիայի ույլսականցինը Բ. Հովհաննես ուղղված զեկուցագրում հալեպի գնրմանական հյուպատոս Վ. Ռյոսլերը հայտնում է, որ Ֆընտրճագի հայության դիմադրության հիմնական պատճառը իշխանությունների դաժանություններն էին:

Երիտարարք զարդարաբների դեմ հերոսական ինքնապաշտպանության է դիմում Ուրֆա (Եղեսիա, Ուրիա) քաղաքի հայկական թաղամա-

սի բնակչությունը: Քաղաքի 100 հազար բնակչից 35 հազարը հայեր էին:

Մեպտեմբերի 29-ի առավոտյան թուրքական ոստիկանության հետ ընդհարումն առիթ է դառնում սկսելու Ուրֆայի հերոսամարտը: Հայերին «ի գեն» կոչելով դոդանցում են հայ առաքելական եկեղեցու զանգերը:

Օտարերկրացի ականատեսը վկայում է. «...հայկական եկեղեցու մեծ զանգը սկսեց հնչել: Երբեք չեմ մոռանա այս հնչյունի ներգործությունը մեզ վրա: Այն խկական տագնապազանգ էր: Ուրֆայում զտնված ամբողջ ժամանակահատվածում մենք չենսցինք զանգի ձայնը: Հայերը չեին համարձակվում զանգը դոդանցել նույնիսկ կիրակի օրը՝ երկյուղելով, որ կզրգեն թուրքերի մոլուանդությունը: Այնպես որ, լսելով զանգի անընդհատ դոդանցը նրա հարկադիր լուրջունից հետո, այն մեզ խոսքերի պես պարզորեն ասում էր, որ հայերը կռվելու են մինչև վերջ...»:

Թաղամասն արագորեն պատվում է բարիկադներով: Տներն ու պատուհանները փակվում են, պատերում հրակնատներ են բացվում: Քաղաքամասը բաժանվում է վեց պաշտպանական շրջանների՝ 32 դիրքերով. փակվում են թաղամաս տաճող 12 փողոցների մուտքերը: Պաշտպանության նույն համակարգը ստեղծվել էր նաև թաղամասի ներսում:

Ինքնապաշտպանությունը կազմակերպելու և դեկավարելու համար ստեղծվում է Զինվորական խորհուրդ, որի մեջ մտնում են դաշնակցականներ Մկրտիչ Յոթենդրայրյանը, Հարություն Ռասմեկեննյանը, Հովհաննես Խմիրզյանը, Լևոն Էղբարլերյանը, Արմենակ Աթթարյանը, Հարություն Սիմյանը և Խորեն Ջյուփելյանը: Խորհրդի դեկավար է ընտրվում Մ. Յոթենդրայրյանը՝ Ուրֆայի ինքնապաշտպանության ոգին, ինչպես նրան բնութագրել է միսիոներ Յակ. Քյունցիերը: Կազմվում է պարենամթերքի հայթայթման ծառայություն, զենքի վնրանորոգման և զինամթերքի պատրաստման արհեստանոց և բուժօգնություն: Տարիքավորներին հանձնարարվում է հետևել թաղամասի ներքին կարգ ու կանոնին:

Ինքնապաշտպանների թիվը, ըստ գերմանական հյուպատոսական աղբյուրի, եղել է 2 հազար, ըստ մեկ այլ աղբյուրի՝ 800 հոգի: Նրանց զգալի մասը պատահաններ և աղջիկներ էին:

Մ. Յոթենդրայրյանի և զինակիցների նոանդուն գործունեության շնորհիվ ուրֆացիներն ապահովվեցին բավարար քանակությամբ զենք և զինամթերքով: Մ. Յոթենդրայրյանը, ով նախքան պատերազմը Ուրֆայի ՀՅԴ զինական հարցերի պատասխանատուն էր, իր ընկերների

հետ Հալեպի օսմանյան զորանոցից հափշտակել էր 103 հրացան:

Ինքնապաշտպանության համար բազարիկ նշանակություն ուներ այն, որ հայկական թաղամասն ավելի բարձր դիրք ուներ թուրքականից: Գրեթե յուրաքանչյուր տուն ուներ ջրհոր: Այս ամենը, ինչպես նշում է գերմանացի միսիոներ Յակոբ Ռյունցլերը, հայերին հնարավորություն էր տալիս երկար ժամանակ դիմագրավել թուրքերին:

Մինչև կանոնավոր բանակի գալը, տեղական իշխանությունները ոսրի են հանում շրջակայրի թուրք և քուրդ բնակչությանը, որը թալանի ակնկալիքով պատրաստակամությամբ արձագանքում է: Միայն առաջին օրերին նրանց տրվում է 500 հրացան և 60000 փամփուշտ:

Հոկտեմբերի 1-ին ամբողխն անցնում է հարձակման: Ուրֆացիները կեղծ նահանջ են կատարում, թշնամուն հնարավորություն տալով մտնել թաղամաս, ապա անսպասելի գրոհով ջախջախում: Նույն գործողությունը կրկնվում է հոկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը, և կրկին խառնամբոխը ծանր կորուստներով փախուստի է դիմում:


Մարտերին մասնակցում են նաև կանայք և աղջիկները, որոնցից առավել աչքի ընկածներին՝ Խանում Քերենճանին և Մարիամ Չիլինկիրյանին, հանձնվում են ռազմավարային գենքներ: Հնտագայում կանացից և աղջիկներից կազմվում է մարտական ջոկատ՝ թվով 200 հոգի:

Հակառակորդի կորուստներն այնքան մեծ էր ու զգալի, որ նա երկու օր որևէ ակտիվ գործողության չի դիմում, այլ բավարարվում է թաղաքի բերդից հայկական թաղամասը ոմբակնծելով: Պարսիկ ականատեսի վկայությամբ՝ հայերն իրենց անվերնպ կրակոցներով ոչնչացնում էին թուրք երետանավորներին: Վերջիններին ոչնչացնելու գործում աչքի է ընկնում Մ. Յոյններայրյանի նդրայրը՝ մեկ աչքից կույր Սարգիսը: Ժողովուրդը նրան իր անվերնպ նշանառության համար տվել էր «Աստծո բիբ» պատվավոր մականունը:

Ինքնապաշտպաններին հայտնի է դառնում, որ Հալեպից Ուրֆա է բերվում զորք և հրետանի: Զինվորական խորհուրդը որոշում է հանդուզն հարձակումով փորձել վնասել թնդանոթները: Այդ մարտական



Մկրտիչ Յոթնեղբայրյան



### Հարություն Ռասթկելենյան

առաջադրանքը հանձնարարվում է Սարգսի Յոթանեղբայրյանին և մի խումբ մարտիկների: Նրանք դարանակալում են Ուրֆա մտնող ճանապարհի մոտ: Հրետանու մոտենալու պահին, հայերն անվրեալ կրակոցներով ոչնչացնում են հսկող զինվորներին, իսկ Ս. Յոթանեղբայրյանը և Գևորգ Ալահայտոյանը քանդում են թնդանոթերից մեկի փակադակը: Նույնը չի հաջողվում կատարել մյուս թնդանոթի հետ: Հակառակորդի բազած կրակը հարկադրում է հայերին նահանջել:

Եվ միայն մթության քողի ներքո թուրքերը համարձակվում են հրետանին, կամ ինչպես բնորոշել է շվեյցարացի ականատես Յակոբ Քյունցլեր՝ «մարդասպանության գործիքը», քաղաք բնրել:

Ուրֆայի հայության դեմ կնևտրոնագվեց մոտ 11 հազար հոգի, որից 6 հազարը՝ կանոնավոր քանակ և չորս թնդանոյթ: Այդ ուժերը զլսավորում էր Հալեպի ռազմական պարետ Ֆահրի փաշան և նրա տեղակալ, զերմանացի զնդապետ Վոլֆսկենի ֆոն Ռայխենբերգը: Ֆահրի փաշան այդ տարածաշրջանում Զեմալ փաշայից հետո համարվում էր երկրորդ քարձրաստիճան սպան: Ֆահրի փաշան և Վ. ֆոն Ռայխենբերգը դեկապարենուի էին Զնյայունի և Մարաշի հայ բնակչության բռնագաղթն ու կոստրածը:

Հոկտեմբերի 5-ին թուրքական քանակն անցավ հարձակման. կատաղի մարտեր սկսվեցին: Կրիվը չդադարեց նույնիսկ գիշերը:

Հոկտեմբերի 7-ին թուրքական հրամանատարությունն առաջարկում է հայերին հանձնվել, սակայն Զինվորական խորհուրդը մերժում է: Դրանից հետո սկսվում է հայկական թաղամասի ուժգին և անընդմեջ հրետակոծությունը, որին հետևում է հակառակորդի լայնածավալ հարձակումը: Ինքնապաշտպանները հաջողությամբ հետ են մղում թուրքական հետևակի և քրդական անկանոն ջոկատների գրոհը: Հակառակորդի ուժերը լուրջ կրուստներ են կրում հատկապես հայերի օգտագործած ինքնաշեն նոնակներից:

Անհաջողությամբ է ավարտվում նաև հոկտեմբերի 8-ի լայնածավալ հարձակումը:

Հայերն անձնազոհ մարտնչում են թուրքների դեմ՝ զիտակցելով, որ միայն այդ կերպ կարող են արժանի հակահարված տալ արյունաբրու ոսղսին և վրեմինդիր լինել:

Հռկտեմբերի 9-ի հարձակման ժամանակ հակառակորդին հաջողություն է գրավել Թուֆրոսուր կոչվող բլուրը, որը գերիշխող դիրք ուներ հայկական թաղամասի վրա: Թշնամին այժմ հնարավորություն ուներ իրենտանային կրակի տակ պահել հայկական թաղամասի ցանկացած կետ: Օտարենկրացի ականատեսը վկայում է. «Դեռատի աղջիկները մահվան վրա խնդալով, զինվորներուն (թուրք-Ռ. Ս.) կպոռային... Տեսնք, մենք կերգենք, տեսնք մենք կը զվարճանանք»:

Ծանր կորուստները հարկադրում են Ֆահրի փաշային կրկին դիմել բանակցությունների: Նա խոստանում է կյանքի և զույրի ապահովություն: Սակայն ինքնապաշտպանները մերժում են: Յ. Քյունցլերի վկայությամբ, անձնատուր լինելուն դեմ էին հատկապես կանայք ու աղջիկները: Նրանք գերադասում էին «ավելի շուտ կռվելով զոհվել, քան կորցնել պատիվը և սովոր մեռնել»:

Թաղամասը պաշարող զորքների թվում էին օսմանահպատակ, ազգությամբ արաք զինվորներ: Նրանք դժկամությամբ էին մասնակցում, հաճախ խոսափում էին իրենց համար տիած և անցանկալի կոհիներից, ուստի կարճ ժամանակ անց նրանց փոխարինեցին ուզմածակատից բերված լուրը զինվորներով:

Թուրքները ծանր կորուստներ են կրում: Քաղաքի գերմանական հիվանդանոցը լեփ-լեցուն էր վիրավոր թուրք զինվորներով: Նրանցից մեկը պատմում է Յ. Քյունցլերին, թենի ինչպես 23 զինվորներով գրոհել են հայկական դիրքերից մեկի վրա և կատաղի մարտից հետո իրենցից ողջ են մնացնել միայն ինչն զինվոր, բոլորն էլ վիրավոր:

Ուրֆացիները միայն չեն պաշտպանվում, այլ օգտագործելով հարմար պահը՝ դիմում էին հանդուզն հակագրուեների՝ թշնամուն պատճառելով զգալի կորուստներ: Հռկտեմբերի 8-ի նրեկոյան Ա. Ցոթներբայրյանը երեսուն մարտիկներով, ծպտվելով լուրբական քանա-



Մարիամ Չիլինկիրյան

Կի համազգեստով, իմանալով զիշերային նշանաբանը, մթության քողի ններո, անցնում է թշնամու թիկունքը, ապա անակնկալ հարձակվելով՝ ոչնչացնում է հարյուրից ավելի զինվոր և հարկադրում հակառակորդին լրել դիրքերը: Համանման հարձակումներից մեկի ժամանակ հաջողվում է թուրքերից խել հինգ միավոր զենք և չորս արկդ փամփուշ:

Հոկտեմբերի 9-ին, ծանր զոհերի գնով, հակառակորդին հաջողվում է գրավել Թուրքական կոչվող բլուրը, որը գերիշխող դիրք ուներ հայկական թաղամասի նկատմամբ: Թուրքերն այժմ հնարավորություն ունեին հրետանային կրակի տակ պահել հայկական թաղամասի ցանկացած կետ:

Աստիճանաբար թշնամին սեղմում է պաշարման օդակը և գրավում հայկական մի քանի դիրքեր: Զգացնել է տախոս հակառակորդի թվային գերակշռությունը: Այնուամենայնիվ, թուրքերն ու քրդերը շարունակում են ծանր կորուստներ կրել: Ցանկացած առաջևադաշտում նրանց տրվում էր զգալի զոհերի գնով:

Մարտերից մեկի ժամանակ վիրավորվում է Մ. Յոթներբայրյանը: Դա որոշ խուճապ է առաջացնում ինքնապաշտպանների շրջանում: Նա յուրայիններին ոգևորելու նպատակով, հրամայում է, որ իրեն պատզարակի վրա դնեն և տանեն դիրքերը: Այս կերպ նա շարունակում է դեկավարել մարտը՝ միաժամանակ խրախուսելով մարտական ընկերներին. «Տղե՛ք զան, մեր հարսանիքն է այս. կովեցե՛ք առանց վախի, զարկեցե՛ք ու պատվով մեռեք, որ մեր սնրունդը ամոլով չմնա թշնամիի առջև»:

Հայկական թաղամասը պաշարած թուրքական զորամասերը հիմնականում բաղկացած էին Սիրիայի զանազան շրջաններից զինակոչված և ազգույամբ արաբ զինվորներից: Նրանք դժկամությամբ էին մասնակցում մարտերին: Այդ էր պատճառը, որ թուրքական հրամանատարությունն այդ ուժները փոխարինում է ճակատից բերված բացառապես թուրք զինվորներով:

Պաշտպանական տեղամասերից մեկում, հակառակորդի հրետանու՝ անընդհատ ռմբակոծության օրենցօր ավելացող կորուստների պատճառով, ինքնապաշտպանները լքում են մի քանի դիրքեր: Յուրայինների նահանջն ապահովող Լևոն Չերչյանն անհավասար մարտի մեջ է մտնում թուրքերի հետ: Ծնորիկիվ այդ անձնազոհության, հայ մարտիկներին հաջողվում է առանց կորստի հեռանալ:

Թուրքական զորքերն աստիճանաբար սեղմում են պաշարման օդակը, և ինքնապաշտպաններն օրեցօր, իրար հետևից կորցնում են մի շարք դիրքեր:

Հոկտեմբերի 20-ին հայերը շարունակում են դիմագրավել ամեն կողմից հարձակվող թուրք-քրդական ուժերին: Ի վերջո, ինքնապաշտպանները հարկադրված են լինում տեղի տալ: Հոկտեմբերի 23-ին ավարտվում է Ուրֆայի 25-օրյա հերոսական մարտումը: Թարնվելով տների նկուղներում, փլատակներում և թարստոցներում՝ ուրֆացիները դիմադրում են մինչև նոյեմբերի կեսերը:

Ներխուժելով հայկական թաղամաս, թուրքերն ու քրդերը անգեռուեն սպանում են ողջ մնացած բնակիչների մի մասին: 300-ից ավելի տղամարդկանց և կանանց քարափից ցած են ննտում, 42 հոգու կախաղան են բարձրացնում: Ինքնապաշտպանության գործուն մասնակիցներից մեկին՝ հայ բողոքականների պատոր Սողոմոն Աքելյանին կախելիս պարանը կտրվում է: Արիասիրտ մարդը հեգնանքով տառում է. «Ո՛վ թուրքեր, ձեզի պես ձեր չվաճան ալ փուած է, ավելի ամուրը քերեք»:

Երբ կախում էին վիրավոր Սարգիս Յոթներքայրյանին, Ֆահրի փաշայի այն հարցին, թե՞ն նա ինչ կաներ, եթե ազատ արձակվեր, Սարգիսը պատասխանել է. «Առաջին հերթին քեզ կաստկացնեմ»:

Թուրք հրամանատար Օսման թեյի մոտ են քերում զերված իինգ հայերի, որոնց թվում նաև տղամարդու հազուստով երկու հայուիհների: Երբ զինվորները զնդակահարելուց առաջ սկսում են մերկացնել զոհերին՝ նրանց հազուստին տիրանալու համար, հայուիհներից մեկը գոչում է. «Կեցե՛ք, նս ձնորովս մերկանամ»: Աղջիկը անսպասելիորեն տարատից դուրս է քերում թաքցրած ատրճանակը և ողջ պահունակը դատարկում Օսման թեյի ճակատին: Մի պահ շփոթված զինվորները ուշքի են գալիս և սպանում բոլորին:

Ճիշտ է, Ուրֆայի գոյամարտն ավարտվում է հայերի պարտությամբ, սակայն թուրքերը տարիներ անց հիշում են հայերի անգիտում դիմադրությունը: Դրա վկայությունն է հանդիսանում հետևյալ փաստը: Երբ քեմալականներն անցնում են իշխանության գլուխ և սկսում են Ուրֆայի շրջանից դուրս մղել ֆրանքիական զորքերը, նրանք չեն համարձակվում հարձակվել 1918 թ. Մուլուսի զինադադրից հետո քաղաք Վերադարձած հայերի վրա: Թուրքերը ամբողջությամբ կոտորում են ֆրանքիական զորացոլատղ, սակայն չեն գանկանում կրկին փոր-

ձեզ ճակատագիրը և հարձակվել Ուրֆան կրկին լքող հայերի վրա: Թուրքերի մոտ դեռևս թարմ էին 1915 թ. աշնանը հայերի համառ և անգիջում դիմադրության հետ կապված դառը հուշերը:

Ուրֆայի հերոսամարտը հայ բնակչության վնասին հերոսամարտը չէր: Տարբեր վայրերում՝ լեռներում և անտառներում թաքնված հայերը ուշքի գալով, կարծ ժամանակ անց, կազմակերպում են մարտական խմբեր: Նրանք ոչ միայն վրեմիսնդիր են լինում ջարդարարներից, այլև փրկում են թուրքական և քրդական զերության մեջ գտնվող հայրենակիցներին: Նման վայրերից մեկն էր Տրավիզոնի նահանգը:

Կազմվում է 40 հոգուց բաղկացած խումբ, որը հարձակումներ էր գործում հակառակորդի վրա: 12-ից 15 տարեկան ութ պատանիներ կազմել էին իրենց մարտախումբը, որը ևս շարունակաբար հարձակվում էր թշնամու վրա:

1916թ. դեկտեմբերի 20-ի մի նամակում տրավիզոնցի մի երիտասարդ հաղորդում է տեղահանությունից փրկված հայերի դիմադրության մասին: Շանայի շրջանի հայերը՝ մոտ 300-ից 500 հոգի, որոնց զգալի մասը կանայք ու երեխաներ էին, ապաստանում են շրջակա անտառներում: Տեղեկանալով այդ մասին՝ իշխանությունները նրանց դեմ ուղարկում են ժանդարմական ստորաբաժանում: Հայերը կազմակերպված դիմադրություն են գույց տալիս: Սակայն ժանդարմները, չնայած կորուստներին, շարունակում են համառեն գրոհել և ամեն անգամ նրանց հարձակումները հետ են մղվում: Սակայն անհանգստացնում է ուսումնառությունը սակավությունը և պարենի պակասը:



Ինքնապաշտպանության համար զինված հայ պատաճաճեր

Նամակագիրը նշում է հայերին օգնող վրացու և հույների մասին: Հայերն օգնության խնդրանքով դիմում են մի քանի եվրոպացիների, որոնք մի փոքր գումար են ուղարկում: Դրամը հնարավորություն կտար կանանց ու երեխաներին օթևան զտնել շրջակա հունական գյուղերում: Բանն այն է, որ «Վերջերս գիլացիք շատ կը դժվարանան, որովհետև հոդ քավական տնտեսական տագնապ գոյություն ունի. ամեն որ ինք գինքը կը հոգա»: Անտառում թաքրնել էին մոտ 100 հոգի: 10 հոգի չոփմանալով գրկանքներին՝ վերադառնում են Տրապիզոն և Կրոնափոյլս լինում: Ինչպես նշում է նամակագիրը. «Խնդիրը այս սրիկաներու լարած թակարդի շուրջը չէ. խնդիրը հոն է, որ այս խոսքներն ու դեպքերը քիչ բազություն կը ներշնչեն հույն գյուղացիներուն, որոնք առաջվա չափ չեն սարսափի հայեր պահելն, միայ թե դրամ լինի, դրամ ու միշտ դրամ. կարծ՝ դրամով կարելի է մեր կյանքը փրկել»:

Հայերը նույնիսկ կարողանում են աջակցնել ուսական հրամանատարության՝ թուրքական գորքերի դեմ մղվող մարտական գործողություններում: Նրանք, լինելով տեղացիներ, լավ գիտեն նահանգը և հաճախ կատարում էին հետախուզական բնույթի առաջադրանքներ: Ինչպես վերիշում է Միսակ Թորլարյանը, Պրիմորսկյան (Կովկասյան 1-ին բանակային կորպուս) ջոկատի հրամանատար, գեներալ Վլ. Պ. Լյախովը նրանց 1915թ. դեկտեմբերին հանձնարարում է անցնել Տրապիզոն և հետախուզական տեղեկություններ հավաքել հակառակորդի գինուժի, սպառազինության, տեղաբաշխման և այլնի մասին:

Սաստինի կոտորածներից փրկված վաթսուն հայեր, Տեր Խորեն քահանայի և Աքրահամ Խաչատրյանի զլսավորությամբ, ապաստանելով լեռներում մարտել էին մղում թուրքական կանոնավոր ստորաբաժանումների դեմ: Տեղեկանալով Տրապիզոնի գրավման մասին, նրանք կարողանում են կապ հաստատել ուսական հրամանատարության հետ: Ուստի նրանց են տալիս 120 միավոր գենք և 92 նռնակ: Թուրքական հրամանատարությունը տեղեկանալով հայերի ստացած զենքի և զինամթերքի մասին, նրանց դեմ է ուղարկում 700 զինվորից կազմված ջոկատ: Հակառակորդը հայերին առաջարկում է հանձնվել, խոստանալով խնայել նրանց, սակայն մերժում ստանալուց հետո, անցնում է հարձակման: Հայերն իրենց ուժերը բաժանում են երեք մասի և դիմում կազմակերպված պաշտպանության: Աջ պաշտպանական տեղամասի հրամանատարն էր Զիլ Հովհաննեար, կենտրոնականինը՝ Միքրայել Զեյթոնյանը, իսկ ճախինը՝ Խաչիկ կարակենովյանը: Հայերի

Կազմակերպված դիմադրությունը հարկադրում է թուրքերին նահանջել:

Մ. Թորլարյանի ուժերի հետ հաշվեհարդար տեսնելու նպատակով, Տրավիզոնի նահանգապետ Ջնմալ Ազմի բնյը, 2500 զինվորներից և ժանդարմենից կազմված ուժ է ուղարկում: Հակառակորդ հարձակվում է երկու ուղղությամբ՝ Շանա և Տրավիզոնից հարավ-արևմուտք գտնվող մյուս խմբի ուղղությամբ: Վերջիններս, երեքօրյա մարտերից հետո, մոտ 30 սպանված տալով նահանջում են: Ազատված ուժերը հակառակորդն ուղղում է Մ. Թորլարյանի ջոկատի վրա: Նրանք դիրքեր էին գրավել Գալաֆկա սարի վրա: Թշնամին, չկարողանալով հաջողության հասնել, փորձում է հայերին վախճանել մարտական ինքնաթիռով: Վերջինս, հավանաբար, կամ խփում է ռուսների կողմից, կամ էլ անսարքության պատճառով փթարի է ենթարկվում և ընկնում ծովը:

Չկարողանալով կոտրել հայերի դիմադրությունը, հակառակորդը հրդեհում է անտառը, հուսալով կրակով ոչնչացնել նրանց: Մարտիկները կարողանում են գրեթե առանց կորստի դորս գալ և փրկել իրենց հետ նդած քաղաքացիական անձանց: Նրանք որոշել են անհաջողության դեպքում սպանել խմբում նդած աղջիկներին, որպեսզի նրանք չընկնեն թուրքերի ձեռքը: Ինչպես նշում է Մ. Թորլարյանը. «Խումբը մույթին մեջ կամաց-կամաց անտառն կ'ենճ, ամեն մեկը հայ աղջիկ մը իր կործին, որպեսզի նեղ պարագային գնդկահար ընե: Բարեբախտաբար անվնաս դուրս կուգան ու կը հասնին մեզ»:

Դիմորսկյան ջոկատի հրամանատարությունը նախաձեննում է հակառակորդի կուտակած պարենի պաշարների ոչնչացումը: Տնդեկանալով, որ Թերմեն գյուղի պահեատներում և համանուն գետի գետաբերանում գտնվող առագաստանավներում կա զգալի քանակությամբ ցորեն, ռուսները որոշում են դրանք ոչնչացնել: Մի խումբ տրավիզոնաբնակ հայ հետախույզներ ափ են հանվում Թերմենի գետաբերանում: Նրանք պարզում են, որ գետում կան 50-ից ավելի ցորենով քեռնված առագաստանավեր: Բացի այդ, Թերմեն գյուղում կային ցորենի խոշոր պաշարներ: Նշված ցորենը նախատեսված էր ուղարկել գործող քանակ:

1916թ. հոկտեմբերի 20-ին ռուսական երեք ականակիր և մեկ բեռնանավ, մոտենալով Թերմենի գետաբերանին, ափ են իջեցնում 40 աշխարհագորայինների և տեղացի 150 հայ կամավորների: Նրանց են միանում նաև հայ հետախույզները: Թերմեն գյուղը գրոհում են նաև հայկական ուժերը: Նրանք առաջին հերթին կտրում են հեռագրաթեները և հեռախոսաթեները: Գրոհի ազդանշանը լինում է նրանց կողմից պարզ-

Ված դրոշակներ: Դիվերսիոն-հետախուզական ստորաբաժանումը կարողանում է կոտրել հակառակորդի պաշտպանությունը և ոչնչացնել Թերմեն գյուղի հացահատիկի պահեստները և նույնիսկ Տրավիզոն քերել զորենով քենուված 20 առազաստանավ:

Օրդուի շրջանում գործում է հայկական մարտական ջոկատ՝ Կարապետ Վարդանյանի հրամանատարությամբ: Նա կապ էր պահպանի Զանիկի (հրամանտար՝ Կարա Խաչիկ կարավոյոցյան), Թերմենի և Զարշամպայի շրջաններում գործող հայկական խմբերի հետ: Վերջին երկու շրջաններում գործում էր Զիլ Հովհաննեսի խումբը: 1917 թ. Զանիկի, Թերմենի և Զարշամպայի խմբերը միավորվում և ծանր մարտում պարտության եմ մատնում թուրքական կանոնավոր ուժերին: Նույն թվականին դավադրաբար սպանվում են մի քանի հայ հրամանատարներ, որոնց թվում Զիլ Հովհաննեսը:

Թուրքական իշխանություններին լուրջ անհանգստություն էր պատճառում Քուչուկ Արթին Արզումանյանի ջոկատը: Նրա գլխի համար թուրքերը մեծ զումար են խոստանում:

1922թ. Կարա Խաչիկի և Սարու Յանենի պոնտական հույների ջոկատները համատեղ մարտեր են միենի քեմալական գորքերի դեմ:

1923 թ. գարնանը, երբ հակառակորդի ճնշումն ուժինանում է և հնարավոր չեր այլևս շարունակելի պայքարը, Կարապետ Վարդանյանը 105 մարտիկներով, նավակներով անցնում է Ռուսաստան:

Այսպիսով, 1915 և նույնիսկ հետագա տարիներին որոշ վայրերում հայ բնակչությունը կատաղի և անհավասար կրիվներ մղեց սեփական գոյատևման համար: Ինքնապաշտպանական մարտերը մղվեցին բացառիկ ծանր պայմաններում: Ճիշտ է, այդ մարտերի ընացքում հայերն ունեցան զգալի կորուստներ, սակայն կարողացան որոշ ժամանակ դիմակայել և սպառագինությամբ, և մարտական պատրաստակամությամբ ու թվաքանակով զերազանցող թուրք-քրդական ուժերի դեմ:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, օսմանյան Թուրքիայի երիտթուրքական կառավարությունը կազմակերպեց և իրականացրեց իր տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանի և Փոքր Ասիայի հայաբնակ շրջանների հայ բնակչության ցեղասպանություն:

Ազգային կուսակցությունները, գլխավորապես Դաշնակցությունը, կարողացան կազմակերպել բնակչության ինքնապաշտպանությունը և փրկել արևմտահայության մի մասին:

## Գրականություն

### Հայերեն

Աղամյան Դ. Մ., Կիլիկյան դրվագներ, Ֆրնտճազի հերոսամարտը (Հռոշատետրեն քանի մը էջեր), Փարիզ, 1921:

Ա-դո, Մեծ դեպքերը Վասպուրականում 1914-1915 թվականներին, Ե., 1917:

Անդրեասյան Տ., Զեյթունի անձնատվությունը և Սուետին ինքնապաշտպանությունը, Լահիբեն, 1915:

Ասրյան Ա. Ա., Արամ Մանուկյանի կյանքը և գործը (Ազատագրական շարժման և անկախ պետականության վերականգնման ուղիներում), Ե., 2008:

Արամ Մանուկյան. Փաստաթղթերի և նյութերի ժողովածու. Գլխավոր խմբագիր և կազմող՝ պատմական գիտությունների դրկտոր Ամառունի Վիրաբյան. Կազմողներ՝ Գոհար Ավագյան, Մարտ Ավետիսյան. Առաջաբանի հեղինակ՝ Արմեն Ասրյան, Ե., 2009:

Արամ Մանուկյան. ազգային և պետական գործիչ (հոդվածների ժողովածու), Ե., 2010:

Արզումանյան Մ. Վ., Դարավոր գոյամարտ, Ե., 1989:

Գաբրիելյան Ն., Եղեռնապատում փոքրուն հայոց և նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոն, Պութըն, 1924:

Գալուստյան Կ., Գաբրիելյան Ն., Ագ-Տաղի քառամյա գոյամարտը, Մարտի, 1932:

Գասպարյան Ռ. Հ., Հայկական կոտորածները Կիլիկիայում XIX-րդ դարի 90-ական թթ., -1921թ.), Ե., 2005:

Իսկենտերյան Հ., Սվետին ապստամբությունը, Լահիբեն, 1915:

Լութեն, Ուրֆայի հերոսամարտը, Պեյրութ, 1933:

Լարավետյան Մ. Ա., Հայոց 1915-1916 թվականների ցեղասպանության հիմնահարցները հետխորհրդային հայ պատմագրության մեջ, Ե., 2001:

Կենրիկիզյան Ա., Վասպուրականի հերոսամարտը, Պեյրութ, 1965:

Կիրակոսյան Զ. Ա., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-1916թթ. Ե., 1967:

Կիրակոսյան Զ. Ա., Երիտրուրբերը պատմության դատաստանի առաջ, Ե., 1982:

Կոսոյան Հ., Վան բնրդարադարի ժողովրդային հերոսապատումը,

Թեհրան, 1966:

Համբարյան Ա. Ս., Արևմտահայութի 1915թ. կոտորածները և ինքնապաշտպանական մարտերը, Ե., 1988:

Հայ ժողովրդի պատմություն, հատոր 6, Հայկական ՍՍՀ Գա հրատ., Ե., 1981:

Հայկազ Ա., Ծագին-Գարսահիսար ու իր հերոսամարտը, Նյու Յորք, 1957:

Հայկական հարց, Հանրագիտարան, Ե., 1996:

Հիսայան Հ., Դյուցազնական հայորդին, Մկրտիչ Յոթնեղբայրյան, Աթենք, 1937:

Հուշեր Արմենակ Եկարյանի, Կահիրեն, 1947:

Մխիթարյան Օ., Վանի հերոսամարտը, Սոֆիա, 1930:

Մուրդյան Հ. Մ., Էջեր հայ ժողովրդի հերոսական անցյալից, Ե., 1983:

Նորաշխարհյան Լ., Զեյթունը 1914-1921թթ. (Հուշեր), Ե., 1984:

Պողոսյան Հ., Զեյթունի պատմությունը 1409-1921թթ., Ե., 1969:

Պողոսյան Հ., Սասունի պատմություն (1750-1918), Ե., 1985:

Պուրսայյան Հ. Գ., Մուսա-Ղուան հերոսամարտը, Հալեպ, 1954:

Սահակյան Ա., Դյուցազնական Ռուբան և իր հայորդիները, Պեյրութ, 1955:

Սահակյան Ռ. Գ., Ցեղասպանության պատմությունից, Ե., 1990:

Սահակյան Ռ., Խուդավերդյան Կ., Հայոց ցեղասպանությունը տասնամյակների լույսի ներքո, Ե., 1995:

Սահակյան Ռ. Օ., Արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կրիվները 1915 թվականին, Ե., 2005:

Սասունի Կ., Թրքահայաստանը Ա աշխարհամարտի ընթացքին (1914-1918), Պեյրութ, 1966:

Սիմոնյան Հր. Անդրանիկի ժամանակը, Երկու գրքով, գիրք Ա, Ե., 1996:

Զեմալ Փաշա, Հայկական հարցը, Ե., 1927:

Վասպուրական. Վան-Վասպուրականի ապրիլյան հերոսամարտի տասներենամյակին առթիվ, 1915-1930, Վենետիկ-Ս. Ղազար, 1930: Փափազյան Վ., Խմ հուշերը, հատոր 2, Պեյրութ, 1952:

## *Литература*

- Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919). Материалы политического архива министерства иностранных дел кайзеровской Германии. Новые документы. Отв. ред. В. А. Микаелян, Е., 1995.
- Арутюнян А. О., Кавказский фронт 1914-1917 гг., Е., 1971.
- Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов, под ред. М. Г. Нерсисяна, 2-е доп. издание, Е., 1983.
- Геноцид армян: Официальные документы из германских архивов публикуемые впервые, Вольфганг и Зигрид Густы (составители сборника документов), Е., 2005.
- Р де Ногалес. Четыре года под полумесяцем. М., 2005.
- Джемал паша, Записки, 1913-1919, Тифлис, 1923.
- Елисеев Ф. И., Казаки на Кавказском фронте 1914-1917. Записки полковника Куванского казачьего войска в тринадцати брошюрах-тетрадях, М., 2001.
- Киракосян Дж. С., Младотурки перед судом истории, Е., 1986.
- Мартиросян Давид, Ванская операция - эпизоды армянской и русской истории  
<http://www.regnum.ru/news/1161786.html>
- Масловский Е. В., Мировая война на Кавказском фронте 914-1917г., Париж, 1933.
- Оборона Вана, 7 апреля-4 мая 1915 г., М., 1917.
- Степанян Ст., Армения в политике империалистической Германии (конец XIX-начало XX века), Е., 1975.
- Шамбаров В. Е., За веру. царя и Отечество! М., 2003.

## *Անգլերեն*

- Alamuddin I., Papa Kuenzler and the Armenians, London, 1970.
- Bryce J., The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-1916, London, 1916.
- Chaeiland G., Ternon Yves, The Armenians: From Genocide to Resistance, London, 1983.
- Gürsoy K., The Armenian File: The Myth of Innocence Exposed, London 1985.
- Hovannissian R., The Republic of Armenia, vol.?. The First Year. 1918-1919, Berkley-Los Angeles-London, 1974.
- Lang D. M., Armenia: Cradle of Civilization, London, 1970.
- Lang D. M., The Armenians. A people in Exile, London, 1980.
- Morgenthau H., Ambassador Morgenthau's Story, N. Y., 1918.
- Nogales R. de., Four Years Beneath the Crescent, (Transl. from Spanish by M. Lee, with an introduction by Lieutenant-Colonel E. Dawis), N. Y.-London, 1926.
- Nogales R. de., Memoirs of Soldier of Fortune, N. Y., 1932.
- Nansen F., Armenia and the Near East, 1914-19124, N. Y., 1928.
- Ternon Vves, The Armenians: History of Genocide (Translation from the French by R. C. Cholakian), N. Y., 1981.
- Uras E., The Armenians in History and Armenian Question, Istanbul, 1988.
- Ussher C. D., Knapp G. H. An American Physician in Turkey. A Narrative of Adventures in Peace and War, Boston, New York, 1917.
- Walker Chr., Armenia: The Survival of a Nation, London, 1980.

## ԳԼՈՒԽԱՆԼՂԵՒ

The Armenian Genocide, Vol. 2. Vorwort von A. Ohandjanian and Univ. Prof. V. Bihl, München, 1988.

Eckart B., Meine Erlebnisse in Urfa, Potsdam, 1922.

Künzler J., Im Lande des Blutes und der Tränen. Erlebnisse in Mesopotamien während des Weltkrieges, Potsdam, 1921.

Künzler J., Dreißig Jahre Dienst am Orient, Basel, 1933.

Lepsius Joh. Deutschland und Armenien 1914-1918. Sammlung diplomatischer Aktenstücke, Potsdam, 1919.

Ohandjanian A., Armenien: Der verschwiegene Völkermord, Wien, 1989.

Sick I. M., Karren Jeppe im Kampf um ein Volk in Not, Stuttgart, 1929.

## ՈՈՒԲԵՆ ՕՆԻԿԻ ՍԱՅԱԿՅԱՆ

Ինքնապաշտպանական կրիվները  
Արեւմտյան Յայաստանում 1915 թվականին եւ  
ՀՅ Դաշնակցությունը

Խմբագիր՝ Գագիկ Սարգսյան

Սրբագրիչ՝ Աննա Ղազարյան

Յամակարգչային ձեւավորումը  
Կարեն Շովիաննիսյանի



## Տպագրված է «Բավիղ» ՍՊԸ տպարանում

Թուղթը՝ 100 գր. օֆսեթ 70/100, 1/16, 4.5 տպագրական մամուլ

Հասցե՝ Ք. Երևան, Ուլնեցու 68,

հեռ.20-80-85

E-mail:bavigh@mail.ru      [www.bavigh.am](http://www.bavigh.am)